

8263

ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ  
ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ  
ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ  
ԱԶԽԱՏԱՆՔԸ

ՅԿՈՅ

Բ-81

ԿՈՒՍՏՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

• 1935

3K73

F-81

պ.

24 SEP 2006

Պրոկտորներ ըստ յերկրների միացն ք  
SEP 2006

ԲՈՒՅԵՎԻԿՅԱՆ  
ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ  
ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ  
ԱԶԽԱՏԱՆՔԸ

3  
3  
3

1008 / 3691  
8001 / 16995

ԿՈՒՍՏՐՈՍ  
ՅԵՐԵՎԱՆ • 1 9 3 5

Խմբ. Հով. Մելիքյան  
Թարգմանեց յեվ արբարեց  
Ա. Տ.-Մկրտչյան

Գլավիճի լիազոր Շ—46, պասվեր № 156,  
հրատ. № 268, սիրած 2500,  
Ինդեքս <sup>П-84</sup>  
PK

Կուսերատի տպարան, Յերևան,  
Ալլահիերդյան № 27

Большевистской решимостью улучшить  
партийную работу  
Партиздат, Эривань, 1935

## ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆՊԱՏԱՍԻԱՆ ԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դասակարգային պայքարն ամեն ուր և ամեն ժամ հիշեցնում է հեղափոխական զգոնության մասին: Դեռ 1933 թիվականի սկզբին, տալով առաջին հնգամյակի հանրագումարը, ընկ. Ստալինն ասում էր. «Հեղափոխական զգոնությունը հենց այն հատկությունն է, վորն առանձնապես անհրաժեշտ է ներկայումս բոլշևիկներին»: Զգոնության հարցը—այդ կամպանիայի հարց չէ: «Պրավդա»-ն արդեն բազմիցս գրել է, վոր բանը բանաձևեր ընդունելը չէ, բանը հանդիսավոր հավաստիացումն ու դեկլարացիաները չեն: Ոպորտունիստները, իշխանագուռները, քայքայված մարդիկ, կարյե-

րիստոնեւերը, վորոնց համար խորհրդային պետութեան շահերը գտնուում են մի ինչ-վոր տեղ, մի ինչ-վոր յերրորդական տեղ, դրանք միայն կարող են յերկրի համար կենսական այս գործում սահմանափակել յերգումններով: Բողոքիկյան զաղափարականութունը, իրենց կուսակցական, խորհրդային դեմքը կորցրած մարդիկ յենթադրում են, թե Խորհրդային Միութեան ուժերի աճման համապատասխան թշնամին դառնում է ձեռնասուն և անփնաս: Չկա ավելի նողկալի բան, քան միամիտ բողոքիկի կերպարանքը, վորը կապիկի նման կրկնում է զգոնութեան վերաբերյալ բառերը, սակայն յոչ մի բան չի նախաձեռնում կուսակցութեան ու պետութեան շահերն ինչպիս հարկն է պաշտպանելու համար:

Թշնամիների բանասարկութունների ու խարդախութունների դեմ հարկավոր է միանգամայն ուսուցում մտածված միջոցներ ձեռք առնել: Յեղ չի կարելի սահմանափակել մեկ անգամ ընդունված միջոցառումներով: Չէ վոր բնական և, վոր մի բնագա-

վառում զգոնութեան յերկաթակուռ պատին դեմ առնելով, թշնամին շրջադարձային ուղիներ է վորոնում:

Կիրովի սպանութեանը, զինովյեվյան-կամենեվյան տրոցկիստական ամենաստոր ու արհամարհված խմբակի գործունեյութունը ցույց տվին, թե ինչպիսի հանցագործութունների յեն ընդունակ այդ վիժվածքները: Միթե մեր բոլոր կազմակերպութունները բոլոր յեզրակացութուններն արին լենինգրադյան սպանութեանից: Մենք, դժբախտաբար, պետք է արձանագրենք, վոր յոչ բոլորը:

Մեր մամուլում դեռ հանդիպում են փաստեր այն մասին, թե ինչպիս ոբլոմով-չչինայի, բութ վստահութեան հետևանքով, ոպորտունիստական բարեհոգութեան հետևանքով, հակակուսակցական տարբերին, ոտարերկրյա հետախուզութունների ցուցումով գործող ամենաղայրագ թշնամիներին յերբեմն հաջողվում է սողոսկել մեր ապարատը: Չինովյեվյանների, տրոցկիստների, նախկին իշխանների, կոմսերի, ժան-

դարձներ զարշահոտ տականքները, համատեղ դործող այդ վողջ թափթփուկը փորձում է տակից կրծել մեր պետութեան պատերը: Հակակուսակցական տարրերի մերկացումը վերջին ժամանակներս, ներքործ-ժողովուրդի որերս հրապարակած հաղորդագրութիւնը՝ Լենինգրադում յեղած ցարական նախկին բարձր աստիճանավորների ձերբակալուելոյն, աքսորելու և պատասխանատուելոյն յենթարկելու մասին ցույց է տալիս, վոր դեռևս կան քաղաքական ու քրեական սրիկաներ, վորոնք խցկվում են ամեն մի ծակուծուկ:

Վերջերս Մոսկվայում դատեցին աֆերիստ Շապոշնիկին, վորը շրջել է քաղաքից-քաղաք և ամեն տեղ, կեղծ փաստաթղթերի հիման վրա, իրեն ներկայացրել է վորպես ինժեներ: Հիմարներն աշխատանքի յեն ընդունելիս յեղել նրան, վստահել պետական ունեցվածքը, և բաղկան ժամանակ պահանջվեց մինչև վոր նրան մերկացրին և բանտ նստեցրին: Կամ մի այլ աֆերիստ ու թշնամի— Կրասովսկին՝ նա ինքը Չալգո-

րոզնիյ՝ Դադատանում իրեն ներկայացրել է վորպես ԽՍՀՄ-ի Կենտրոնական անդամութեան թեկնածու: Հիմարները հաժտացել են նրա խոսքին, և նա սողոսկել է իբրև ընտրական հանձնաժողովի անդամ և հանցագործութեաններ կատարել այնտեղ: Սարատովի յերկրամասում մոտավորապես նույնպիսի պատմութիւն է յեղել, յերբ լրտեսը, ողովելով մի ծիծաղելի կեղծագրով, գլուխ է խոթել պատասխանատու աշխատանքի մեջ և վորոշ ժամանակից հետո յե միայն բռնվել ու զնդակահարվել: Կարելի յե բերել նաև այլ որինակներ, վորոնք վկայում են մարդկանց ընդունելու, պետական գաղտնիքն ու ձեռնարկութեանների ունեցվածքը պահպանելու նկատմամբ հանցագործ թեթևամիտ վերաբերմունքի մասին, այդ թիւում և այնպիսիների, վորոնք պաշտպանողական նշանակութիւն ունեն:

Ինչհա յեն այսպիսի փաստեր տեղի ունենում: Իհարկե, բոլոր դերքերը կորցրած գազադած թշնամին վայր չի գրել իր զենքը: Բայց նրան յերբեմն հաջողվում է փաստ

հասցնել մեզ նրա համար, վորովհետև շատ տեղերում չկա կադրերի բոլջևիկյան ընտրություն: Շատ հիմնարկությունների, ձեռնարկությունների ղեկավարներ իրենց պարտքը չեն համարում ճանաչել և ուսումնասիրել այն մարդկանց, վորոնց նրանք պատասխանատու աշխատանք են հանձնարարում: Ավելին, լինում է և այնպես, վոր զդոնությունը կորցնելու և կենցաղային քայքայման հետևանքով, աշխատողների ընտրությունը կատարվում է վոչ թե գործնական հատկանիշով, այլ խնամիության կարգով: Յեվ յերբեմն ընտրվում են— գիտակցաբար թե անգիտակցաբար, այդ արդեն ուրիշ հարց է— թշնամական, խորթ ու կասկածելի տարրեր:

Վստահություն ընծայելը, հեշտությամբ հավատարու հակումը շատ աշխատողների արատն է, վորոնք կազմալուծում են զգոնության գործը: Հավատ ընծայելը պետք է տարբերել վստահությունից, վորը մշակվում է կուսակցական գաղափարականության, անաղարտ ազնվության և իր յերկրի հետ

կապված լինելու հիման վրա: Քաղաքական վստահությունն այն մարդկանց միջև, վորոնք աշխատանքի մեջ ստուգված են իրենց կուսակցական կամ հասարակական կրքոտ գործունեյությամբ, կուսակցության, կավարության և հայրենիքի հանդեպ ունեցած իրենց նվիրվածությամբ, առաջ է մղում սոցխալիզմի գործը: Իսկ այն հավատ ընծայելը, վորը ծնունդ է առնում նեխած լիբերալիզմից և իր սեփական կուսակցության, իր պետության նկատմամբ թեթևամիտ վերաբերմունքից, խորհրդային մարդուն վոչ հատուկ համակրանք տաժելուց դեպի նախկին մարդիկ, դեպի նրանց ծուլությունն ու փսլնքոտությունը— թշնամիների սնուցման պարարտ հող է հանդիսանում: Հավատ ընծայելն ու անպատասխանատվությունը— այլանդակ յերկվորյակներ են: Հաճախ բանն այնտեղ է հասնում, վոր պատասխանատու աշխատողն իր իրավունքներն ու պարտականությունները վստահում է ուրիշներին և նույնիսկ չի ստուգում և չի տեսնում, թե դա ինչպիսի հետևանքների յ հասցնում:

Յուրաքանչյուր ղեկավար իր մեծ կամ փոքր տեղամասում պարտավոր է ճանաչել մարդկանց, մանրագնին կերպով ընտրել նրանց ու ստուգել: Սա յուրաքանչյուր կոմունիստի և մեր յերկրի յուրաքանչյուր քաղաքացու ամենաառաջին պատվիրանն է: Սա— կուսակցականության, քաղաքացիականության ու հայրենասիրության կարևորագույն տարրերից մեկն է:

Մարդկանց ստուգումը չի հանգում հարցաթերթիկների վերանայման, վորի ավյալները չեն սպառում կենդանի մարդուն, իսկ յերբեմն նաև չեն համապատասխանում իրականությանը: Լավ ղեկավարը տասնյակ մեթոդներով ու յեղանակներով կճանաչի այն մարդկանց, վորոնց հետ նա աշխատում է: Մի՛թե կապիտալիստն իր գործերը վստահում էր առաջին պատահածին: Առավել ևս այդ բանը չի կարելի անել, յերբ իոսքը վերաբերում է բանվորա-գյուղացիական պետության շահերին, նրա ունեցվածքի ու ռազմական գաղտնիքի պահպանմանը: Զոհնությունը հարկավոր է կազմակերպել:

Հեղափոխական զգոնությունը պահանջում է դաստիարակչական ու կազմակերպական ամենորշա և ամենուրեք կիրառվելիք մեջոցառումների սխտեմ՝ կուսակցության ու պետության կենսական շահերը պաշտպանելու համար: Հարկավոր է լավ ճանաչել թշնամուն: Վորպեսզի հասկանալի լինի, թե զինովյեվյան-կամենեվյան ստորտականքներն ու այլ հակահեղափոխական սրբիկաներն ինչպիսի ուղիներով են սողում դեպի մեր բանակը, հարկավոր է ուսումնասիրել կուսակցության պատմությունը՝ թեքումների ու ֆրակցիաների դեմ Լենինի և Ստալինի մղած պայքարի փորձի վրա, սովորել ճանաչել թշնամուն՝ նրա նոր պատյանում: Կուսակցության պանծալի անցյալն ու պանծալի ներկան պետք է յերիտասարդության սեփականությունը դառնան, վորպեսզի նա կարողանա մերկացնել կուսակցության դեռևս չսատկած թշնամիներին, վորպեսզի նա ել ավելի ամուր տողորվի կոմունիզմի մարտական վորդով: Գաղափարական դատարկությունն ու կարյերիզմը հե-

նացնում են հեղափոխութիւնից և մարդկանց թաղում են մեղչանականութիւնն ու քաղքենիութիւնն մեջ: Զգոնութիւնն՝ իբրև կարևորագույն տարբ, իբ մեջ պարունակում է գաղափարականութիւնն ամենորյա բարձրացումը յերկրում և՛ կոմունիստներին ու կոմյերիտականներին մեջ, և՛ ամբողջ աշխատավոր ժողովրդին մեջ:

Առորյա կյանքում ու աշխատանքի ընթացքում հարկավոր է կիրառել զգոնութիւնն վերաբերյալ ստալինյան նակագից բղխող կոնկրետ միջացառումներ: Բոլշևիկյան զգոնութիւնն— այս բանը պետք է լինի կոմունիստին, կոմյերիտականին և մեր մեծ հայրենիքի քաղաքացու արյան մեջ: Այս բանը պետք է իրականացվի ամեն մի գործում: Խոսքը վերաբերում է կադրերին ընտրութիւնն արդյոք, գործարանի պահպանութիւնը, թի՞ պետական գաղտնիքը պահելուն— միշտ ու ամենուրեք հիշիր զգոնութիւնն մասին և արան դրանից բոլոր յեղրակացութիւնները՝ ինչպես այդ վայել է իրենց ժամանակին մեծ խնդիրները գիտակ-

ցող, կոմունիստական կուսակցութիւնն ու Խորհրդային Միութիւնն գործը կրքոտ կերպով սիրող և այդ գործին համար ցավող մարդկանց:

(„Պրավդա“ յի մարտի 25-ի տուշնորյոյը)

## ՀՈԳԱՏԱՐ ԿԵՐՊՈՎ ԱՃԵՏՆԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԸ

Կուսակցութիւնը դաստիարակել և տասնյակ հազարաժողով կուսակցական կազմակերպչիներ: Գործարաններում, նորակառույցներում, կոլտնտեսութիւններում, մեքենատրակտորային կայաններում—սոցիալիստական շինարարութեան բոլոր բնագավառներում կոփված են կուսակցական աշխատողների զգալի կազրեր: Կայուն բուշակիների կազրերով համալրեց կուսակցութիւնը շրջանները՝ մեքենատրակտորային կայանների ու խորհտնտեսութիւնների քաղբաժիններ կազմակերպելու ժամանակ:

Յուրաքանչյուր մի զավառական քաղաք, մեր յերկրի յուրաքանչյուր մի շրջան իր կազրերի կազմով այժմ վորքան նման չե սրանից թեկուզ հինգ-վեց տարի առաջ յե-

ղածին: «Ձի կարելի,—ասում էր վերջերս ընկ. Կազանովինը,—համեմատել ներկայիս և առաջվա կուսաշխատողին: Յեթե առաջ կուսաշխատողը գերազանցապես ագիտատոր էր, ապա այժմ նա լաջ է ճանաչում արտադրութիւնը, անցել է տնտեսական գործունեյութեան հարուստ դպրոց, նրա հորիզոնն ալելի յե լայնացել. նա պետական գործիչ է դարձել»:

Յել այնուամենայնիվ, վորքան հաճախ մենք գանգատներ ենք լսում, թե մարդիկ քիչ են: Սյդ գանգատները բնական են այն շրջանների համար, վորոնք մենք նոր ենք միայն սկսում վեր հանել, ինդուստրացինէ: Սակայն մարդկանց քշութեան վերաբերյալ գանգատները ճնշող մեծամասնութեամբ բացատրվում են գլխավորապես այն բանով, վոր կուսակցական շատ կազմակերպութիւններ բազմական անհող են վերաբերվում մարդկանց աճեցմանը, դաստիարակմանը, առաջ քաշմանն ու ճիշտ բաշխմանը: Մարդկանց վատ են ուսումնասիրում և քիչ են առաջ քաշում: Մինչդեռ ընկ. Ստալինը սո-

վորեցնում ե մեզ՝ ավելի համարձակորեն առաջ քաշել պրակտիկ աշխատանքում իրենց լավ ցուցաբերած մարդկանց:

Կուսակցական կադրերի ճիշտ դաստիարակումն ու աճեցումը խոշոր արժեատ է: Մարդկանց դաստիարակելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց, հարկավոր է ճանաչել կոնկրետ մարդուն՝ իր պահանջներով ու շահերով: Իսկ մեզ մոտ հաճախ այնպես է լինում, վոր չեն նկատում մարդկանց: Կամ նկատում են այն ժամանակ, յերբ մարդը տույժի յե յենթարկվել, սխալ է գործել: Մարզի կենտրոնում, որինակ, շրջանային աշխատողին նկատում են մեծ մասամբ այն մամանակ, յերբ շրջանը հետ է մնում, ձախողում է վորեւ մի կամպանիա: Յե՞վ հաճախ փոխանակ սովորեցնելու աշխատողին ու ոգնելու նրան՝ դուրս դալու դժվար դրությունից, արվում է հերթական նկատողությունը: Վնասակար շաբլոն: Հարկ չկա ասելու, վոր այսպիսի մեթոդները վտչ մի ընդհանուր բան չունեն աշխատողի նկատմամբ ցուցաբերվելիք իս-

կական բուլլեիկյան վերաբերմունքի հետ, իսկական բուլլեիկյան դաստիարակության հետ: Կուսակցության կենտրոնական կոմիտեն սովորեցնում է ուշադիր և զգայուն մտեցում ունենալ դեպի մարդիկ:

«Հարկավոր է խնամել յուրաքանչյուր նստուհի և հասկացող աշխատողի, խնամել ու աճեցնել նրան: Մարդկանց հարկավոր է հողատար և ուշադիր կերպով աճեցնել, ինչպես այգեպանն է աճեցնում սերված պտղատու ծառը: Դաստիարակել, ոգնել աճելու, հեռանկար տալ, ժամանակին առաջ քաշել, ժամանակին փոխադրել այլ աշխատանքի, յեթե մարդը չի կարողանում առաջ տանել իր գործը, չսպասելով՝ մինչև վոր նա վերջնականապես տապալվի»:

Ահա թե ինչ է սովորեցնում մեզ ընկ. Ստալինը: Անցյալ տարվա դեկտեմբերին մետալուրգների պատվիրակության հետ ունեցած զրույցի ժամանակ կուսակցության առաջնորդի ասած խոսքերն ամբողջությամբ վերաբերում են նաև կուսակցական կադրերի դաստիարակմանը:

169  
366  
8001  
376  
396  
3



դուրս ե գալիս, վոր մարդը 1931 թվականից չունի վնչ կուսակցական տոմս, վնչ հաշվառման քարտ:

Կուսակցական կադրերի աճեցումը պահանջում ե կոմունիստները մտածված ե գաղափարական դաստիարակութուն: Բողեվիկյան սկզբունքայնություն ե անհաշտություն պրակտիկ աշխատանքի յուրաքանչյուր քայլափոխում՝ կուսակցության գծից կատարվող շեղումների դեմ, կուսակցական փողովի գաղափարական բարձր մակարդակ, հրահանգչական զրույցների սխտեմ, ամենուրեք դրժարար հոգատարություն կոմունիստի քաղաքական ու տեսական գիտելիքների մակարդակը բարձրացնելու վերաբերմամբ—անա գաղափարական դաստիարակության կարևորագույն գումարելիները: Հարկավոր ե անդադրում կերպով գինել աշխատողներին կուսակցության պատմությամբ: Բանի վոր կուսակցության պատմությունը չիմանալով, չիմանալով թեքումները դեմ մղվող պայքարի պատմությունը, չիմանալով, թե մեր կուսակցությունն ինչ-

պես ե պայքարի մեջ կոտիել իր հաղթանակները, վոչ միշտ կարելի յե ճիշտ կողմնորոշվել կուսակցության այսօրվա խնդիրներում ե ճիշտ լուծել այդ խնդիրները:

Կուսակցական կադրերի դաստիարակման մեջ հակայական դեր ե խաղում կուսակցական ակտիվին տրվող սխտեմատիկ քաղաքական ինֆորմացիայի դրվածքը: Մեր կուսակցական աշխատողը մարտիկ ե, ագիտատոր, դեկավարող: Ի՞նչպես կարելի յե տանել իր հետևից մասսաներին, յերբ ինքդ հետ ես մնում ընթացիկ դեպքերից, յերբ լավ չգիտես, թե ինչ ե կատարվում մեր յերկրում ե նրա սահմաններից դուրս: Ճիշտ կազմակերպված քաղաքական ինֆորմացիան գինում ե աշխատողին ե հարվածում թշնամու բանասարկություններին:

Կուսակցության խոշոր քաղաքային կոմիտեներին կից գոյություն ուներ միայն կուլտուրայի ե լենինիզմի պրոպագանդայի բաժին ե բացակայում եր կուսակցական կադրերի բաժինը: Առանց այդպիսի բաժնի տուժում եր կուսակցական կադրերի աճեց-

ման ու բաշխման գործը թե՛ շրջանային և թե՛ համաքաղաքային մասշտաբով: Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի վորոշմամբ կուսակցական կադրերի աճեցման, բաշխման և կոմունիստների քաղաքական մակարդակի բարձրացման խնդիրները զբաժանն նոր ստեղծվող՝ կուսակցական կադրերի բաժիններին վրա: Այդ բաժիններն ստեղծվում են քաղաքային կոմիտեիներին կից 63 կետերում և պրոլետարական խոշորագույն կենտրոնների շրջանային կոմիտեիներին կից—Մոսկվայում, Լենինգրադում, Կիևվում, Նարկոլում, Գորկիում, Բազելում: Կուսակցական կադրերի բաժիններին վրայ են ընկած նաև սկզբնական կազմակերպությունների կողմից քաղաքային կոմիտեիների վորոշումների կատարումն ստուգելու խնդիրները և կազմակերպություն ներկուսակցական կյանքի մասին ինֆորմացիա ներկայացնելը:

Կուսակցական կադրերի բաժինների կազմակերպումը հսկայական մի միջոցառում է Կենտրոնական Կոմիտեյի կողմից,

վորի նպատակն է բարձրացնել ներկուսակցական աշխատանքի մակարդակը, բարձրացնել բոլշևիկ-դեկաբրների կադրերի վորակը սոցիալիստական շինարարությունում: Կուսակցական կադրերի ճիշտ դաստիարակումը կոզնի ամենամոտիկ ժամանակում առաջ քաշելու նոր տանյակ հաղթարավոր բոլշևիկ-կազմակերպիչներ ու պրոպագանդիստներ և անկասկած կնպաստի գյուղի նկատմամբ քաղաքի դեկաբրություն և կազմելի ուժեղացնելուն:

(«Պրավդա»-ի մարտի 26-ի առաջագրություն)

## ՎՃՌԱԿԱՆՈՐԵՆ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

«Պրավդա»-յի յերեկվա համարում հրապարակվեց ՀամԿ(բ) Կ Կենտկոմի վորոշումը՝ կուսակցութեան՝ 63 քաղաքային կոմիտեաներում կուսակցական կադրերի բաժիններ և քարտուղարութեաններ ստեղծելու մասին: Այդ վորոշումը հետապնդում է քաղաքներում կազմակերպական ու պրոպագանդիստական աշխատանքն ըստ ամենայնի աշխուժացնելու նպատակ, վորը վերջին ժամանակներս թուլացել է:

Մեր կուսակցութեանն այժմ ի մի յե համախմբված՝ ինչպես յերբեք, աճում է նրա հեղինակութունը մասսաների մեջ: 17-րդ համագումարից հետո անցած ժամանակը ընդանը բնորոշ է Սորհրդային Միութեան բանվորների ու կոլտնտեսականների քա-

ղաքական ակտիվութեան նոր հուժեղ ալիքով: Այդ իր արտահայտութեանը գտավ արդունաբերութեան արտադրական ծրագրերը հաջողութեամբ կատարելու մեջ, մետալուրգիների փայլուն հաղթանակի մեջ, կուտնտեսութեանների ամբապնդման մեջ: Այդ հաստատվում է խորհուրդների ընտրութեան մեջ մասսաների ակտիվ ու համարյա գլխովին մասնակցութեամբ և Սորհուրդների համաժողովենական 7-րդ համագումարի ու հարվածային կոլտնտեսականների 2-րդ համագումարի աշխատանքների նկատմամբ ցուցաբերվող նրանց բացառիկ հետաքրքրութեամբ: Այդ հաստատվում է, վերջապես, մասսաների միջից հազարավոր հիանալի, տաղանդավոր կազմակերպիչներին մեծ չափով և անընդհատ առանձնացումով, բանվորների, կոլտնտեսականների, ծառայողների և հատկապես յերիտասարդութեան հրակայական ձգտմամբ՝ տիրապետելու գիտութեան, տեխնիկայի ու կուլտուրայի նոր բարձունքներին:

Սակայն մեծ միամտութեան կլինեն հա-

Նողությունները վրա հանգստանալը: Մենք  
իսկապես հաղթեցինք թշնամիներին և հաղ-  
թեցինք ավելի արագ, քան պետք էր սպա-  
սել: Սակայն չի կարելի մոռանալ, վոր դեռ-  
ևս մինչև վերջ արմատախիլ չեն արված  
շահագործող դասակարգերի մնացորդները:  
Այժմ ավելի, քան յերբևե, պետք է հիշել  
ընկ. Ստալինի բաղմիցս նախադգուշացում-  
ներն այն մասին, թե վորքան ավելի արագ  
ենք մենք շարժվում առաջ, այնքան ավելի  
սուր է դասակարգային պայքարը: Չի կա-  
րելի մոռանալ նաև այնպիսի հանգամանք,  
վոր կոլտնտեսային կարգը թեկուզ և հաղ-  
թանակել է անվերադարձ կերպով, կապի-  
տալիստական նոր տարրերի ծնվելու պրո-  
ցեսը դեռևս վերջնականապես չի դադարել,  
քանի վոր յերկրում դեռ կա մանր, բաժան-  
բաժան յեղած գյուղացիական տնտեսու-  
թյուն, կան արհեստավորներ, տնայնագործ-  
ներ, կեղծ արտելներ:

Վորքան ավելի խոշոր են մեր հաջողու-  
թյունները, այնքան ավելի կատաղի և հու-  
սահատ է դառնում թշնամիների ընդդիմա-

դրությունը: Նրանք անում են ամեն ինչ՝  
մեզ ֆրասելու համար, ճգնում են սողոսկել  
ձեռնարկությունները, խորհրդային հիմ-  
նարկները, ուսումնական հաստատություն-  
ները, կոմյերխամբության և նույնիսկ կու-  
սակցության մեջ: Նրանք իրենց ազդե-  
ցությունն են գործում բանվորների ու  
կոլտնտեսականների ավելի պակաս կայուն  
շերտերի և հատկապես յերխտասարգության  
վրա, վորն ավելի շուտ է ընկնում թշնամու  
ծուղակը, քանի վոր նա չգիտե անցյալը և  
նրա համար ավելի դժվար է նորը հնի հետ  
համեմատելը: Այդ այնքան ավելի հեշտու-  
թյամբ է հաջողվում նրանց, վորքան ավելի  
յե բթացած գոհնությունը, վորքան ավելի  
թույլ է դրված կուսակցական-դաստիարակ-  
չական աշխատանքը:

Սոցիալիզմի թշնամիներն, իհարկե, հետ  
շրջողը չեն պատմության անիվը: Բոլոր  
ժամկետները վաղուց արդեն անցել են:  
Նրանց չի ոգնի նաև իմպերիալիստների  
կողմից ցույց տրվող ոգնությունը: Յեւ  
նրանք կուսակցության ու խորհրդային իշ-

խանութեան դեմ պայքարելու պակաս սուր  
ձևերից անցնում են առաջիկ սուր ձևերի:  
Նրանք վերջին փորձն են կատարում և դե-  
մում են ծայրահեղ միջոցները՝ մինչև իսկ  
յերկրի լավագույն մարդկանց դեմ տեռորիս-  
տական ակտեր կազմակերպելուն:

Իսկ վորո՞նք են այն բանի պատճառնե-  
րը, վոր չնայած խորհրդային պետութեան և  
կուսակցութեան ուժին ու հզորութեանը  
թշնամուն այնուամենայնիվ հաջողում և  
ֆեասել մեզ: Նրանք գլխավորապես ու նախ  
և առաջ՝ թաղնաձև են զգոնութեանը կորց-  
նելու մեջ, կուսակցական կազմակերպու-  
թյունների աշխատանքի թերութեանների  
մեջ: Վորոջ ընկերներ բավականին թեթե-  
վամտորեն են նայում յերկրի անտեսու-  
թեանը՝ իբրև համատարած սոցիալիստական  
հարթավայրի, մոռանալով ջախջախձամ կու-  
լակութեան մնացորդների գոյութեան ու, թե-  
կուզ և աննշան քանակութեամբ՝ կապիտա-  
լիստական նոր տարրերի առաջացման պրո-  
ցեսի մասին: Այսպիսի մարդկանց մոտ առ-  
նվազն բացակայում և հարցի մարքսիստա-

կան ըմբռնումը, նրանք մոռացութեան են  
տալիս հեղափոխական զգոնութեան տար-  
րական այբուբենը: Դժբախտաբար, այդ-  
պիսի մարդկանց թիվը մեզանում դեռևս քիչ  
չէ: Նրանք ճախրում են ամպերում, չեն  
ըմբռնում իրականութեանը և դրա համար  
ել կազմակերպական ու պրոպագանդիստա-  
կան աշխատանքի մեջ սխալներ են թույլ  
տալիս:

Ընկ. Ստալինը 17-րդ համագումարում  
մանրամասն խոսեց կուսակցութեան դրու-  
թեան մասին, մասնավորապես նա մատ-  
նանշեց գաղափարական ու կազմակերպա-  
կան աշխատանքի թուլութեանը և իբրև  
կարևորագույն ու առաջնահերթ խնդիր ա-  
ռաջ քաշեց այդ աշխատանքի վճռական բա-  
րելավման հարցը: Համագումարից անցել  
և աճելի քան մեկ տարի: Սակայն չի կա-  
րելի ասել, վոր կուսակցական կազմակեր-  
պութեանները հարկ յեղածին պես ու բոլ-  
շևիկորեն ձեռնամուխ են յեղել ընկ. Ստա-  
լինի ցուցման կենսագործմանը: Մինչև այժմ  
կազմակերպական ու պրոպագանդիստական

աշխատանքը դեռ շարունակում է հետ  
մնալ կուսակցութեան քաղաքական գծի պահանջներին:

Կենտրոնական Կոմիտեյի կողմից վերջերս կատարված ստուգումը խոշորագույն թերություններ հայտաբերեց կուսակցական կազմակերպությունների գործունեության մեջ: Նրանցից շատերը մինչև այսօր էլ դեռ չեն հասկացել 17-րդ համագումարի վերջում և ընկ. Ստալինի ցուցումների հիմնական իմաստը՝ կուսակցական շինարարութեան բնագավառում: Նրանք սահմանափակվել են ձևերի փոփոխումով, իսկ յերբեմն պարզապես ցուցանակները փոխելով, առանց կանոնավորելու, առանց բարելավելու իրենց աշխատանքն՝ ըստ ելութեան: Կուսակցական կոմիտեները հաճախ փոխարինում են տնտեսական ու խորհրդային ապարատին, հետին պլանը թողնելով կազմակերպական ու դաստիարակչական աշխատանքը, դրանով իսկ մոռանալով իրենց անմիջական և ուղղակի պարտականությունները, մոռանալով, Վոլոգդայի ժողովուրդը:

ընկերը շատ ավելի հեշտ է, քան մարդկանց դաստիարակելը:

Կուսակցական հարցերի նկատմամբ հարկ յեղած ուշադրութեան բացակայութեամբ հասցրեց նրան, Վոլոգդայի կուսակցական կոլեկտիվներին մեջ լացկվեցին խորթ ու անհարգատ տարրեր: Այդ կազմակերպութեան ներքին վատ են ճանաչում մարդկանց, չեն զբաղվում նրանց դաստիարակութեամբ, կադրերը հոսուն են: Վերջապես, այդ կազմակերպութեան ներքին տեղ են գտնում այնպիսի աղաղակող փաստեր, ինչպես, որինակ, անվստահություններ կուսակցական փաստաթղթերի նկատմամբ: Վաղուց չեն, ինչ մեք հաղորդեցինք այն մասին, Վոլոգդայի «Կրամսի Պերեկոպ» գործարանի կուսակցական կազմակերպության անդամների տասը տոկոսից ավելին չունեն իրենց ձեռքում կուսակցական փաստաթղթեր: Դրանք կամ կորցված են, կամ գողացված:

Ծայրահեղորեն անբավարար է պրոպագանդիստական աշխատանքը: Պարագանքները քաղամբակներում, իբրև կանոն,

անց են ացվում ձևականորեն, անհետա-  
քըրքեր և կտրված են կուսակցութեան ան-  
դամներէ, թեկնածուներէ ու համակրողների  
այտրվա հրատապ պահանջներէց: Թույլ և  
դրված քաղ-դաստիարակչական աշխա-  
տանքն ուսումնական հաստատութիւննե-  
րում և կոմյերիտմիութեան մեջ: Յերիտա-  
սարդութիւնը միշտ չե վոր դաստիարակ-  
վում ե բոլշեիկյան տրադիցիաների վրով:  
Կազմակերպական ու սլրոպագանդիստա-  
կան աշխատանքի այսպիսի վիճակն այլևս  
չի կարելի հանդուրժել: Մեր կուսակցու-  
թիւնը — կառավարող կուսակցութիւն և  
խորհրդային պետութեան մեջ և նա պար-  
տավոր և անդադար ամրացնել իր տեղա-  
կան կազմակերպութիւնները, իր ապարատը,  
իր կադրերը, անընդհատ բարելավել մաս-  
սայական կազմակերպութիւններէ՝ հատկա-  
պես կոմյերիտմիութեան ու պրոֆմիութիւն-  
ների աշխատանքը, վորոնք շարժանադորդ  
փոկեր են հանդիսանում կուսակցութիւնից  
դեպի մասսաները: Այս պայմաններում մեր  
կուսակցութիւնն ավելի հաջողութեամբ

կմերկացնի դասակարգային թշնամիների  
բանասակցութիւնները և ավելի հաջողու-  
թեամբ կծավալի իր աշխատանքը մեր յերկ-  
րի աշխատավորութեան բոլոր խավերի մեջ,  
քայլ առ քայլ աղատագրելով նրանց դետակ-  
ցութիւնն անցյալի ժառանգութիւնից:

Յերեկ հրապարակված վորոշումը՝ քա-  
ղաքային կոմիտեներում քարտուղարու-  
թիւններ և կուսակցական կադրերի բաժին-  
ներ ստեղծելու վերաբերյալ, ամբողջապես  
ուղղված ե դեպի կուսակցութեան կազմա-  
կերպական ու սլրոպագանդիստական աշ-  
խատանքի վճռական բարելավումը: Նոր  
ձևով, հստակորեն պետք ե աշխատի կու-  
սակցական ապարատը, խնամքով պետք ե  
ընտրվեն ու ճիշտ դասավորվեն կուսակցա-  
կան աշխատողների կադրերը: Հարկավոր ե,  
վոր կուսակցական կյանքը ազդրուրի նման  
հորդի, վորպեսզի կոմունիստներն ու կոմ-  
յերիտականները լինեն անկուսակցական  
մասսաների իսկական կազմակերպիչներն  
ու նրանց գաղափարական դաստիարակները:  
Մենք չենք կասկածում, վոր կուսակ-

ցական կազմակերպությունները բուլղերկորեն կգնահատեն կուսակցական շինարարության բնագավառին վերաբերյալ Կենտրոնական Կոմիտեյի վերջին վորոշումներէ կարևորությունը, բուլղերկորեն ձեռնամուխ կլինեն սխալներէ ուղղմանը և ամենամտիկ ժամանակում կհասնեն կուսակցական ու դաստիարակչական ամբողջ աշխատանքի որինակելի դրվածքին:

(Պրավդա"-յի մտքի 29-ի առաջնորդը)

## ԽՈՐՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ և բախտավոր յերկիր դարձա՞յ աշխարհում մեր սոցիալիստական հայրենիքը: Յե՞վ այժմ ձ՞վ չի հասկանում, Վոր նա դրանով պարտական և բուլղերկյան կուսակցությանը, նրա կազմակերպությանը, ստրատեգիային ու տակտիկային:

Լենինի-Ստալինի կուսակցությանը վիճակվեց համաշխարհային-սլատմական մի ծառայություն մատուցել ճիշտ գիտական հեղափոխական թերթիա մշակելու և կիրառելու գործին: Մեր կուսակցությունն իր 32-ամյա գոյության ընթացքում, հանդիսանալով հեղափոխական մարքսիզմի միակ արտահայտիչը, վիթխարի աշխատանք կատարեց՝ շատ դարերի ու մարդկային սերունդների փորձը յուրացնելու և քննադա-

տաբար վերամշակելու ուղղութեամբ: Լենինը  
գրել է. «Մարքսիզմը, վերպես միակ  
ճիշտ հեղափոխական թեորիա, Ռուսաստանն  
իրօք քանջանքով ձեռք բերեց՝ չլսած տա-  
ռապանքները ու զոհերը, չտեսնված հեղա-  
փոխական հերոսութեան, արտասույթը յե-  
ռանդի, անձնվիրութեան, ուսուցման վո-  
րոնումները, գործնականում կրած հիա-  
սթափությունները, Յեվրոպայի փորձի  
ստուգման ու համադրման կեսդարյա պատ-  
մութեամբ»:

Բոլշևիկյան կուսակցութեան պատմու-  
թյունը հագեցված է մի հսկայական պայ-  
քարով, վոր մղել է նա թե իր սեփական  
շարքերում և թե նրանցից դուրս գտնվող  
բազմաթիվ թշնամիների դեմ: Մեր կուսակ-  
ցությունն անողոքաբար մերկացրել է կա-  
դետներին, եսերներին, անարխիստներին,  
լեզալ մարքսիստներին, եկոնոմիստներին,  
մենշևիկներին, ոտզովիստներին, սրոցկիստ-  
ներին, աջ ոպորտունիստներին, «ձախերին»:  
Այդ հերոսական պայքարում մեր կուսակցու-  
թյունը մինչև վերջը զարգացրեց և պաշտպա-

նեց մարքսիզմ-լենինիզմի բոլոր հիմունքները՝  
պրոլետարիատի դիկտատուրայի վերաբե-  
րյալ, բանվոր դասակարգի և գյուղացիու-  
թեան դաշինքի վերաբերյալ, առանձին  
վերցրած մի յերկրում սոցիալիզմ կառուցե-  
լու հնարավորութեան վերաբերյալ ուսմուն-  
քը և այլն: Այդ պայքարում աճում և կոփ-  
վում ելին բոլշևիկյան բազմաթիվ կադրեր,  
ստեղծվում եր յերկաթակուռ կարգապա-  
հություն, դաստիարակվում եր մարտական  
հեղափոխական վոգի, կուտակվում եր սո-  
ցիալիստական շինարարութեան և մեր աճ-  
ման դժվարութեանները հաղթահարելու  
փորձ:

Ահա թե ինչու չկա մասսաներին մարք-  
սիզմ-լենինիզմի վոգով դաստիարակելու ա-  
վելի լավ զենք, քան մեր կուսակցութեան  
պատմությունը: Առանց բոլշևիզմի պատ-  
մությունն ուսումնասիրելու, առանց ծանո-  
թանալու կուսակցութեան կյանքի թեկուզ  
ամենազլխաւոր ետապներին, չի կարելի  
ապահովել մարքսիզմ-լենինիզմի հիմունք-  
ները յուրացումը:

Ամեն տեսակ ոպոզիցիոն խմբակներ, կուսակցութեան ներսում անփոփոխ արտահայտելով պրոլետարիատին թշնամի դասակարգային ուժերի իդեոլոգիան, բազմիցս սկսել են իրենց «տարաձայնությունները»՝ առաջին հայացքից զուտ թեորետիկ և փիլիսոփայական հարցերից: Ընդսմին նրանք յերդմել են, թե իրենք հաճատարիմ են կուսակցութեանը և նրա միասնութեանը: Լենինը և ապա Ստալինը միշտ մերկացրել են այդ տարաձայնությունների հակակուսակցական բնույթը: Յե՛վ արդարև, ամեն անգամ ոպոզիցիոն խմբակները, ձևավորվելով վորպես ֆրակցիաներ, իրենց հարվածն ուղղել են բոլշևիկյան կուսակցութեան միասնութեան դեմ:

Տրոցկիստները և զինովյեվականները, աջ ուղիւնիստները և աջ-«ձախ» այլանդակները կուսակցութեան միասնութեան դեմ ուղղված իրենց հակահեղափոխական արշավը ամենայն ջանքերով քողարկել են ամեն տեսակ «բարձր սկզբունքային» պլատֆորմաներով ու դեկլարացիաներով: Ընկ. Ստալ-

լինի ղեկավարութեամբ բոլշևիկները մերկացրին այդ դիմակահանգեսը: Բուրժուազիան ոպոզիցիոններների ձեռքերով իր թաթն եր մեկնում պրոլետարիատի կոկորդին: Նա ձգտում եր թափանցել պրոլետարական ղեկատուութեան ամրոցը, կործանել կուսակցութեան պողպատակուռ միասնությունը և պայթեցնել բանվոր դասակարգի իշխանությունը: Յե՛վ յերբ զինովյեվյան խմբակը ջարդուփշուր յեղաձի, բաղխվելով բոլշևիկյան միասնութեան միաձույլ պարխսպներին, սրիկաներն իրենց ստոր յերկերեսանիւթյունը ցինիկաբար զենք դարձրին ընդհատակյա պայքարի համար: Նրանք փորձում եյին կուսակցութեան անդամներին վճռանց բարոյալքել՝ կուսակցութեանը խաբելու հանցավոր, բանդիտային պրիտով: Նրանք մի գրպանում կրում եյին կուսակցական տոմսը, իսկ մյուսում՝ սպիտակ-գվարդիական ատրճանակը:

Մարքսիզմ-լենինիզմի, վորպես հեղափոխական գործողութեան մարտական թեորիայի, հիմունքներն ինչպես հարկն ե յու-

ինացնելու համար պետք է գիտենալ, թե  
ինչպես է մերկացրել մեր կուսակցությունը  
դասակարգային թշնամու բոլոր գիմակա-  
վորումները, ինչպես է արթնացրել նա  
կուսակցության անդամներին զգոնությունը:

Ուսումնասիրելով կուսակցության պատ-  
մությունը, կոմունիստը, մանավանդ յերի-  
տասարդ կոմունիստը, վոչ միայն կգիտենա  
Ջինովյեվի և Կամենեվի մինչհոկտեմբերյան  
և հետհոկտեմբերյան որերի շտրեյկբրեխերու-  
թյան ու դավաճանության փաստերը, այլև  
նրա համար ավելի լրիվ ու ավելի պարզորոշ  
կդառնան նրանց լիակատար անկման պատ-  
ճառները: Կուսակցության պատմությունն  
ուսումնասիրելով, ավելի հասկանալի յեն  
դառնում սոցիալիստական ինդուստրացման  
ու կոլեկտիվացման հաղթանակները և ամ-  
բողջ ժողովրդական տնտեսության տեխնի-  
կական վերակառուցման ավարտման յերկ-  
րորդ հնգամյակի հեռանկարները: Միևնույն  
ժամանակ ավելի պարզ են դառնում պրոլե-  
տարական հեղափոխության այնպիսի ար-  
մատական հարցերը, ինչպիսին է մի յերկ-

րում սոցիալիզմ կառուցելու հնարավորու-  
թյանը, բանվոր դասակարգի ու գյուղա-  
ցիության դաշինքին, դասակարգերի վոչըն-  
չացմանը վերաբերյալ ուսմունքը և այլն:  
Կուսակցության պատմությունը պետք է  
կենդանի դաս հանդիսանա մեր ժամանակա-  
կից պայքարի համար:

Կուսակցության պատմության ուսումնա-  
սիրումը վերջին տարիներս շատ առաջ է  
գնացել: Այդ փաստ է: Այնուհանդերձ այդ  
աշխատանքի թափն ու ծավալը դեռ ան-  
բավարար է, նրա վորակը դեռ միշտ չի  
դրված պատշաճ բարձրության վրա: Ընկ.  
Կազանովիչն ասել է. «Մեր կուսակցության  
պատմությանը հաճախ ձևական մոտեցում  
են ցուցաբերում, ավելի կամ պակաս չա-  
փով բարեխղճորեն են շարադրում ժամա-  
նակագրությունը, դուրս են քաշում առան-  
ձին փաստեր, ավելի կամ պակաս չափով  
ճիշտ են նկարագրում առանձին անցքեր,  
սակայն յերևան չեն բերում այդ փաստերի  
ու անցքերի փոխադարձ կապը»:

Պարապմունքներն հաճախ պատահական

բնուէթ են կրում, վերածվում են անշատ դասախոսութիւններէ, արագասլաց վազքի՝ զանազան ժամանակաշրջաններէ ու եպոսխաների վրայով: Այլ դեպքերում կուսակցութեան պատմութեան խմբակները կանգ են առնում, մնում «1905 թվականը», «Ռեակցիայի տարիները» թեմաների վրա և ավելի հեռուն չեն գնում, իսկ նոր տարվանից սկսում են սկզբից:

Եյական բացեր ունեն կուսակցութեան պատմութեան դասագրքերը: Նրանք շարադրված են չափազանց կոնսպեկտիվ ձևով: Պրոպագանդիստները դանգատվում են, թե դասագրքերում բավականաչափ չեն լուսաբանված հակակուսակցական խմբակների տակտիկան և մեր կուսակցութեան կողմից նրանց դեմ մղվող պայքարի մեթոդները:

Ընկ. Պոստիշեվը մաքսուլենինյան կըրթութեան սիքանի խնդիրներին վերաբերող իր ճառում, վոր որերս հրապարակվել էր «Պրավդա»-յում, մատնանշել էր բացորոշ, պարզ, հասկանալի ու պատկերավոր լեզվի

կարևորութիւնը: Կուսակցութեան պատմութեան դասավանդումը հաճախ կատարվում է չոր ու ցամաք և գրքային լեզվով:

Կուսակցութեան պատմութեան ուսումնասիրումը պետք է լինի հրապուրիչ, լի հեղափոխական վոգեշնչմամբ այն աշխատանքով, վորը կատարվում է բուլղերիկյան կուսակցութեան մարտական գործերը յուրացնելու համար: Միմիայն այդպիսի ուսումնասիրումը կդաստիարակի կոմունիստներին ու կոմյերիտականներին, աշխատավորներին նորանոր խավերին կբարձրացնի ակտիվ սոցիալիստական շինարարութեան, կուսակցութեան թշնամիների դեմ պայքարելու, հակալենինյան ջախջախված խմբակների հայացքների մնացորդների դեմ պայքարելու:

Կուսակցական կազմակերպութիւնները պետք է ամեն ջանք գործադրեն, վոր կուսակցութեան պատմութիւնն անպատճառ ուսումնասիրի ամեն մի կոմունիստ ու կոմյերիտական, ոգնելով նրանց յուրացնելու այդ պատմութիւնը՝ շագկապված ներկա որվա

և մեր հեղափոխութեան հեռանկարները հետո:  
Առաջին հերթին պետք է ուժեղացվի ու  
կենդանացվի կուսկոմիների այնպիսի աշխա-  
տանքը, ինչպիսին է կուսդպրոցների ու  
խմբակների ծրագրերի և պարապմունքների  
ընթացքի քննարկումը, հրավիրելով ծրա-  
գրերի հեղինակներին, ղեկավարներին և  
ուսկնդիրներին: Անպայման պետք է վե-  
րակառուցվի կուսակցական կաբինետների  
աշխատանքը, վորոնք հաճախ փոխարինում  
են կուլտ-պրոպանդան, փոխանակ կուսակ-  
ցական ակտիվին թեորետիկ ու մեթոդիկ  
ոգնութեան մի կենտրոնը հանդիսանալու:  
Վորպես կուսակցութեան պատմութեան  
դասատուներ պետք է առանձնացնել լա-  
վագույն բուլշևիկներին, հուսալի, կայուն,  
տեսականապես անհողող ու կրթված բուլ-  
շևիկներին: Վոչ մի վերահսկողութուն չի ոգ-  
նի, յեթե չի ապահովված գլխավորը՝ դա-  
սախոսների, դասատուների ու ղեկավար-  
ների լավ, գաղափարականորեն ամրակուռ  
կազմը: Պետք է հիշել, վոր տրոցկիստա-  
կան-գիտովյեզական և հակահեղափոխական

այլ վիժվածքներ դեռ շարունակում են բուհե-  
րի, ինստիտուտների ու դպրոցների ամբիոն-  
ներից մեր կուսակցութեան պատմութունը  
կեղծելու իրենց փորձերը: Այստեղ անհրա-  
ժեշտ է առավելագույն զգոնութուն:

Բուլշևիզմի ամբողջ պատմութեան մեջ  
խոսքը վերաբերում է հուզող, գրավիչ, հե-  
ղափոխական հրապույրով լի գործերին ու  
մարդկանց: Կուսակցութեան պատմութունը  
կոմունիստների մեջ դաստիարակում է  
հպարտութեան ու պատվի զգացմունք, վո-  
րովհետև աշխարհում չկա ավելի բարձր,  
ավելի պատվավոր մի կոչում, քան բուլշ-  
վիկյան կուսակցութեան, Լենինի-Ստալինի  
կուսակցութեան անդամի կոչումը:

(„Պրավդա“-ի մուտքի 7-ի առաջնուրդը)

## ԸՆԴԴԵՍ ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ

Սկզբնական կուսակցական կազմակերպություններին կից ՀամԳ(բ)Կ-ի համակրողների խմբակներ ստեղծելու վերաբերյալ կուսակցության 17-րդ համագումարի վորոշման կատարման ստուգումը ցույց տվեց, վոր շատ շրջաններում կուսակցական կոմիտեները թերազնահատել են այդ վորոշման նշանակությունը: Վորևե այլ բանով չի կարելի բացատրել այնպիսի փաստերը, յերբ Հենխնգրադի միջանի խոշորագույն ձեռնարկություններում, ինչպիսին Կիրովի անվան գործարանն է, վերջերս են միայն ձեռնարկել համակրողների խմբակները կազմակերպմանը: 17-րդ համագումարի վորոշման նշանակությունը թերազնահատելու հետևվանքով է հենց, վոր Վորոնեժի մարզի, Ստա-

լինգրադի յերկրամասի, Կիեվի մարզի ու Թաթարիայի մի շարք գյուղական շրջաններում թույլ են տվել համակրողների շարքերն ընդունելու կամպանիոն մեթոդներ: Հակառակ կուսակցության կանոնադրությունը՝ թեկնածուական և կուսակցական կոմյերիտական խմբակներին կից ստեղծված են յեղել համակրողների խմբակներ և իբրև են յեղել համակրողների խմբակներ ու դրան հետևանք՝ առանձին դեպքերում նրանց կազմի մեջ սողոսկել են չստուգված, պատահական, իսկ յերբեմն նաև անհարգատ տարրեր:

Յուրաքանչյուր ձեռնարկության մեջ կոլտնտեսությունում, խորհտնտեսությունում և պետապարատներում բանվորների, կոլտնտեսականների, ինժեներ-տեխնիկական աշխատողների ու ծառայողների ճշնկան մեծամասնությունն անձնագոհ կերպով նվիրված է կուսակցությանը և ակտիվորեն պայքարում է հանուն նրա լողունգների: Աշխարհում և վոչ մի կուսակցություն չունի այնպիսի լայն անկուսակցական ակտիվ,

ինչպիսին ունի Լենինի-Ստալինի կուսակցութիւնը:

Յեզ յեթե միքանի խոշոր ձեռնարկութիւններում համակրողները խմբակներ չեն ստեղծված, կամ թե կազմված են ընդամենը յերեք կամ հինգ հոգուց, այդ ուղղակի հետեանք ե կուսակցական կազմակերպութիւնների վատ աշխատանքի, վորոնք ամենորյա դաստիարակչական աշխատանք չեն տանում: Առանց ակտիվի խորն ուսումնասիրման չի կարելի հաջողութեամբ համակրողների խմբակներ ստեղծել «կուսակցութեանն ամենից ավելի մոտ անկուսակցական ակտիվիստներից, վորոնք դործնականում—արտադրութեան մեջ ցույց են տվել իրենց նվիրվածութիւնը կուսակցութեանը, սակայն դեռ պատրաստված չեն կուսակցութեան մեջ ընդունվելու համար» (Համկ(բ)Կ-ի կանոնադրութիւնը):

Սկզբնական կուսակցական կազմակերպութիւններին կից ստեղծված համակրողների խմբակների վորակական կազմի անալիզը ցույց ե տալիս, վոր այդ խմբակներում

ընդունվում են ճնշող մեծամասնութեամբ առաջավոր բանվորներն ու կոլտնտեսականները: Ահա, որինակ, ընդվորուհի Շալինան: Նրա հայրը 40 տարի աշխատել ե գործարանում, աշխատանքի հերոս ե, յերկու յեղբայրները զոհվել են քաղաքացիական պատերազմի ֆրոնտներում: «Սրան կից ինքնակենսագրութեանս հիման վրա,—գրում ե Շալինան,— խնդրում եմ ինձ ընդունել Համկ(բ)Կ-ի համակրողները խմբակի կազմի մեջ: Իմ համոզմունքներով յես մոտ եմ կուսակցութեանը ե ցանկանում եմ համակրողների շարքում յեղածս ժամանակամիջոցում պատրաստել ինձ կուսակցութեան մեջ մտնելու համար, վորոշ գիտելիքներ ստանալ քաղաքական հարցերի ուղղութեամբ, վորպեսզի պատրաստ լինեմ կատարելու ընկ. Ստալինի գիրեկտիվները»:

Համակրողների խմբակներն են գալիս, իբրև կանոն, առաջավոր բանվորները, ինչպես ընկ. Աբրոսիմովը՝ Լենինի անվան գործարանից (Կազան), վոր 13 տարի յե աշխատում ե գործարաններում, խորապես հա-

մոզված ե, զոր Վրուսաժոր ապագային մեզ  
կարող ե հասցնել միմիայն մեր լենինյան  
կուսակցությունը: Աբրոսիմովը՝ համակրող-  
ների շարքերն ընդունված տասնյակ հազա-  
րաժոր այլ բանվորների ու կոլտնտեսական-  
ների նման, հայտարարում ե, թե նա վա-  
ղուց ե իրեն Համհ(բ) կ-ի համակրող հա-  
մարում, սակայն նա ցանկանում ե «մեր  
կուսակցության ակտիվ ողնականը լինել  
յերկրորդ հնգամյակի լարված շինարարու-  
թյան գործում»:

Անհրաժեշտ ե, սակայն, ընդգծել, զոր բան-  
վորների, կոլտնտեսականների և ինժեներ-  
տեխնիկական աշխատողների առաջաժոր ու  
լավագույն մասի՝ դեպի համակրողների  
խմբակները յեղած առողջ ձգտան հետ միա-  
սին համակրողների խմբակներն են փորձում  
սողոսկել նաև քաղաքականապես անկայուն  
տարրեր: Յեվ տեղ-տեղ նրանց հաջողվում ե  
այդ, զորովհետև սկզբնական կուսակցական  
կազմակերպությունները յերբեմն 17-րդ հա-  
մադումարի վորոշման կենսագործմանը մո-  
տենում են իբրև հերթական կամպանիայի:

Համակրողների մեջ կատարվող կուսակ-  
ցական-դաստիարակչական աշխատանքի բու-  
վանդակության մեջ հենց դեռևս փոքր տեղ  
չի բռնում ֆորմալիզմը: Այդ իբ արտահայ-  
տությունն ե գտնում համակրողների նկատ-  
մամբ յուրահատուկ դիմադուրկ մոտեցման  
մեջ, յերբ ծեր, կիսագրագետ և քաղաքական  
ուսուցումը դժվարությամբ ըմբռնող բան-  
վորին տեղավորում են ավելի պատրաստ-  
ված յերիտասարդ բանվորի հետ միասին  
նույն խմբակում և ստիպում են անցնել  
բարդ ծրագիր: Կամ թե համակրողների խմբ-  
բակին վորպես դեկավար ամբացում են  
կիսագրագետ կոմունիստի, կամ բոլոր կու-  
սակցականներին ձևականորեն ամբացում  
են համակրողներին՝ նրանց մեջ անհատա-  
կան քաղաքական աշխատանք կատարելու  
համար, հաշվի չառնելով ընկերների դար-  
գացման մակարդակը:

Վերջապես, չի կարելի չնշել նաև այն  
սխալ տեղեկնցը, զոր գոյություն ունի մի  
շարք կուսակցական կազմակերպություն-  
ներում և վորն իբ արտահայտությունն ե

զանում կուսակցականները ու համակրողները միջև սահմանը վերացնելու փորձերը մեջ: Վորոշ տեղերում մոռանում են տարբերությունը բանվոր դասակարգի ավանգարդի—կոմունիստական կուսակցության և համակրողները խմբակների միջև, վորոնք մի աստիճան են հանդիսանում դեպի կուսակցությունը, մարտական պրակտիկ դպրոց են անկուսակցական ակտիվիստների բոլշևիկյան դաստիարակության և նրանցից լավագույններին կուսակցության շարքերն ընդունելու համար նախապատրաստելու: Դրա համար ել սխալ են մի շարք կազմակերպությունների փորձերը՝ համակրողներին պարտականությունների ու իրավունքների տեսակետից հավասարեցնելու կուսակցության թեկնածուների և անդամների հետ: Չի կարելի, որինակ, ճիշտ համարել այնպիսի պրակտիկան, յերբ, հաշվի չառնելով քաղաքական զարգացման մակարդակը, համակրողից պահանջում են կատարել նույնպիսի պարտականություններ ու հանձնարարություններ, ինչպիսին կարող է կա-

տարել կուսակցության պատրաստված ու քաղաքականապես զարգացած անդամը: Կամ թե, անկախ քննություն առնվող հարցերի բնույթից, հրավերում են միայն դոնբաս կուսակցական ժողովներ՝ համակրողներին մասնակցությամբ:

Համակրողների խմբակները՝ կոմյուրիտմիություն հետ միասին՝ կուսակցությունը քաղաքականապես կայուն ու նոր կոմունիստներով լրացնելու հիմնական կանաչներից մեկն են հանդիսանում: Այդ կապակցությամբ տեղական կուսակցական կազմակերպությունները պետք է հաշվի առնեն, վոր համակրողների խմբակներն ամբացնելու աշխատանքը հատուկ նշանակություն է ստանում: Ժամանակն է վերջացնելու խմբակների «կազմակերպական ձևավորման» փամանակաշրջանը, յուրաքանչյուր համակրողի ներգրավել ակտիվ պրակտիկ աշխատանքի ու ուսուցման մեջ և դրա հետ միասին ապահովել անհատական մոտեցումը յուրաքանչյուր ընկերոջ նկատմամբ, հաշվի առնելով նրա ընդու-

նակությունները, տարիքը, նրա կենցաղա-  
յին և աշխատանքի արտադրական պայման-  
ները:

Ներգրավելով համակրողներին կոնկրետ  
հանձնարարությունների կատարման մեջ  
(որինակ, գրականության տարածում, զրույց-  
ներ հետամնաց բանվորների հետ և այլն),  
անհրաժեշտ է ստուգել նրանց իսկապես  
նվիրվածությունը կուսակցության գլխավոր  
դժին, ոգնելով նրանց գաղափարական մա-  
կարդակը բարձրացնելու, կազմակերպչական  
աշխատանքի ունակություններ ձեռք բերելու  
ասպարիզում, յուրաքանչյուր համակրողի  
դաստիարակելու կուսակցության յերկաթյա  
կարգապահության վոզով:

Վորպես համակրողների մեջ կատարվող  
դաստիարակչական աշխատանքի կարևորա-  
գույն մաս, կուսակցական կազմակերպու-  
թյունները պետք է առանձնահատուկ տեղ  
տան բանվոր դասակարգի թշնամիների—  
հակահեղափոխական արոցկիստների, ղինով-  
յեվականների, աջ ոպորտունիստների և աջ-  
ձախ այլանդակիների—դեմ մղվող անհաշտ

պայքարում կենդանի ու Ստալինի դաստիարա-  
կած մեր կուսակցության բուլշևիկյան տրա-  
դիցիաների ու հերոսական պատմության  
սխտեմատիկ ուսումնասիրմանը:

17-րդ համագումարից հետո բավական  
մեծ ժամանակ է անցել՝ պահանջելու համար  
յուրաքանչյուր կուսակցական կոլեկտիվից՝  
լուրջ կերպով ամրացնելու համակրողների  
խմբակները: Ժամանակն և հասկանալու, վոր  
համակրողների մեջ կատարվող աշխատանքի  
թերազնահատումը հակասում է կուսակցու-  
թյան ցուցումներին և սահմանափակում է  
տեղական կազմակերպությունների ազդե-  
ցությունն անկուսակցական մասսաների  
վրա:

(«Պրավդա»-ի մարտի 28-ի առաջնագրոգը

**ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԹԱՓ՝  
ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ**

Կուսակցութեան 63 քաղաքային կոմիտեներում քարտուղարութիւններ և կուսակցական կադրերի բաժիններ ստեղծելու մասին ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի վորոշումից հետո, վորը տպագրված է «Պրավդա»-յում մարտի 28-ին, յերեկ հրապարակվեց ՀամԿ(բ)Կ Լեւինգրադի քաղաքային կոմիտեյի պլենումի վորոշումը՝ կուսակցական-կազմակերպական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքի խնդիրներին մասին: Այդ փաստաթղթի նշանակութիւնն այն է, վոր նա, լիովին համապատասխանելով Կենտրոնական Կոմիտեյի, ընկեր Ստալինի վերջին ցուցումներին, բաց է անում կուսակցական կազմակերպութիւններին զործունեյութեան մեջ տեղի ունեցած խոշորագույն սխալները

հիմնական պատճառները և նշում է կուսակցական ամբողջ աշխատանքի աշխուժացման ու լաւացման ծաւալուն ծրագիրը:

Սխալները գլխավոր ելութիւնը նրանումն է, վոր կուսակցական շատ կազմակերպութիւններ առաջին պլանն են քաշել տնտեսական և խորհրդային հարցերը, իսկ կազմակերպական-կուսակցական աշխատանքը և կոմունիստները բոլշևիկյան դաստիարակութիւնը մնացել են յերկրորդ տեղում: Կուսակցական կոմիտեները նիստերում գերակշռում են տնտեսական հարցերը: Ահա մի տիպիկ որինակ. մարտի 23-ին յեղել է Կիրովի յերկրային կոմիտեյի բյուրոյի նիստը. նիստը տեւել է ուղիղ 12 ժամ. քննութեան են առնվել 19 ամեն տեսակի հարցեր, և նրանցից ըստ ելութեան միայն մեկն է յեղել ներկուսակցական հարց:

Դեռևս չեն հաղթահարված կուսակցական ղեկավարութեան գրասենյակային-բյուրոկրատական, ֆորմալ մեթոդները: Ղեկավարման նման մեթոդները առավել ցայ-

տունն արտահայտութիւննն ե հանդիսանում, ասված ե Լենինգրադի քաղկոմի պլենումի վորոշման մեջ, «կուսակցութեան անդամներն ու կուսակցական ակտիվի դաստիարակութեան ամենորայ, քրտնաջան, հոգատար աշխատանքը թղթե ղեկավարութեամբ ու վարչարարութեամբ ե կուսակցական ուսումը ձևամոլութեամբ փոխարինելու վոչ-մարք-սիստական, վոչ-բոլշևիկյան պրակտիկան»։ Երևույթողպնների աշխատանքի մեջ զգացվում են կուսակցական լուսավորութեան գործի համար ֆուսակար տենդենցներ՝ կրտրելու Լենինիզմի պրոպագանդան այտրվա քաղաքական խնդիրներից, փակվելու «զուտ» ակադեմիական գիտութեան կեղևի մեջ։ Ակադեմիզմն ու սխոլաստիկան, վորոնք յուրահատուկ չեն բոլշևիզմին, նկատելի կերպով տարածվել են քաղաքացիներում ու խումբակներում։

Կուսակցութեան պատմութեան ուսումնասիրումը կոմունիստներն ու կոմյերիտականներն կողմից ինչպես վոր հարկն ե չի դրված, մինչդեռ բոլշևիզմի պատմութեան

ուսումնասիրութեանը հանդիսանում ե Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ուսումնաքի յուրացման բանալին։ Վորպես կանոն, խմբակներում պարապմունքներն այնպես են դրված, վոր կուսակցութեան կյանքի հարստագույն, հետհետեմբերյան ժամանակաշրջանը չի ուսումնասիրվում։ Լենինգրադի քաղկոմի պլենումը միանգամայն ճիշտ ընդգծեց, վոր «չպետք ե Լինի կուսակցութեան վոչ մի անդամ, վորը չիմանա մեր կուսակցութեան պատմութեան հիմունքները»։

Կուսակցական աշխատանքի թուլանալու վճռողական պատճառները, նվազագույն չափով, հետեյալներն են։ Նախ՝ կուսակցական շատ ղեկավարներն կողմից ներկա ժամանակաշրջանում դասակարգային պայքարի ամբողջ սրութեանը չհասկանալը, մի սրութեան, վոր մեզնից պահանջում ե հատուկ զգուշավորութեան, հեղափոխական հատուկ զգոնութեան, ե վոչ թե բերանբացութեան ու ոպորտունիստական բարեհուգութեան, վոր տեղի ունի կուսակցական մի

շարք կազմակերպություններում: Յերկրորդ՝ կուսակցական ապարատի սիստեմում—քաղկոմներում և շրջկոմներում—այնպիսի կարևորագույն գործիքի բացակայությունը, վորպիսին կուսակցական կազրերի բաժինն է, վորի բացակայությունը վատացրել է կուսակցական կազրերի դաստիարակման, ընտրության և բաշխման աշխատանքը, խախտել է քաղկոմների ու շրջկոմների ամենորյա կապը սկզբնական կազմակերպությունների հետ, վատացրել է կոմունիստների մասսայի վերաբերմամբ կատարելիք աշխատանքը:

Քարտուղարությունների և կուսակցական կազրերի բաժինների ստեղծումը նկատի ունի ներկուսակցական դեմոկրատիայի և ինքնաքննադատության իսկական ծավալումը, կոմունիստների ամբողջ մասսայի բոլշևիկյան դաստիարակությունը: Կուսակցական կազրերի բաժինների առկայությունը թույլ կտա վերջ տալու մարդկանց ընտրության, բաշխման, առաջքաշման ֆորմալ, անպատասխանատու պրակտիկային: Կուսակցա-

կան կոմիտեն պարտավոր կլինի ճանաչելու վնչ միայն այն մարդկանց, վորոնք արդեն իսկ դեկավարում են կուսակցական կյանքի այս կամ ճյուղը, այլև նրանց, վորոնք արդեն հասունացել են ել ավելի խոշոր աշխատանքի առաջքաշվելու համար:

Նշանակալից չափով բարձրանում է կուսակցական կոմիտենների պատասխանատվությունն իրենց կազրերի ճիշտ բաշխման և դաստիարակման համար: Կուսակցական աշխատողների, մանավանդ ստորին, աճեցման գորեղ միջոց է հանդիսանում այդ մարդկանց՝ կուսակցական կոմիտենների ամենորյա գործունեյության մեջ ներգրավելը:

Դրա հետ մեկտեղ հարկավոր է խիստ դատապարտել կուսակցական շատ կոմիտեններին փորձը՝ սվաղելու ակտիվի ժողովների դերը, դարձնելով այդ ժողովները վորպես պլենումներին կցորդներ: Հենց մոտ որերս Վորոնեսի մարզի Ինժավինսկի շրջկոմը խելքին գոռ եր տվել հրավերել Համկ(բ)ի շրջկոմի պլենում «ակտիվի մասնակցությամբ», հրավերելով շրջգործկոմին, ՀամկԿՅԵՄ շրջկոմին,

գյուղխորհուրդներին նախագահներին, կուսկազմակերպիչներին, կոմյերիտական կազմակերպիչներին, կոլտնտեսությունների նախագահներին և խրճիթ-լաբորատորիաների վարիչներին: Յեզ սա արվում է՝ չնայած այն բանին, վոր դեռևս 1934 թ. դեկտեմբերի 17-ին կուսակցության Կենտրոնական կոմիտեն ընդունել է հետևյալ վորոշումը.

«1) Միայն և մեր բողոքիկյան տրադիցիաներին անհամապատասխան համարել այն, վոր վերջին ժամանակներս Համկ(բ)Կ ԿԿ-ի վորոշումները քննարկելու համար մեր մայրաքաղաքային կենտրոններում սկսել են գումարել վոչ թե քաղաքային կազմակերպությունների ակտիվի ժողովներ, ինչպես այդ լինում էր առաջներում, այլ մարզկոմների և քաղկոմների պլենումներ՝ «ակտիվի մասնակցությամբ»:

2) Ընդունել, վոր այս կասկածելի նորմուծությունը թուլացնում է ակտիվի բարոյական-քաղաքական նշանակությունը և ակտիվը դարձնում է մարդկոմի

և քաղկոմի պլենումի բյուրոկրատիկ հավելվածը (գումարվում է վոչ թե ակտիվը, այլ մարզկոմի պլենումը՝ «ակտիվի մասնակցությամբ»):

3) Վերականգնել այն հին դրությունը, վորի համաձայն Համկ(բ)Կ ԿԿ-ի վորոշումները քննարկելու համար պետք է գումարվեն, վորպես կանոն, քաղաքային կազմակերպությունների այն ակտիվները, վորոնք ունեն և պետք է վոր ունենան իրենց առանձնահատուկ քաղաքական նշանակությունը մեր կուսակցության կյանքում:

4) Համարել անհրաժեշտ, վորպեսզի առանց բացառության բոլոր հանրապետական, յերկրային և մարզային կենտրոններում, ինչպես նաև բոլոր շատ թե քիչ նշանավոր արդյունաբերական կենտրոններում պարտադիր կերպով գումարվեն քաղաքային կուսակազմակերպությունների ակտիվներ՝ Համկ(բ)Կ ԿԿ-ի Պլենումի վորոշումները քննարկելու համար, վորպեսզի ակտիվները գումար-

վեն վնչ թե շքահանդեսի և ՀամԿ(Բ)Կ  
ԿԿ-ի վորոշումներին ֆորմալ-հանդիսա-  
վորութեամբ հավանութեան տալու հա-  
մար, այլ նրանց իսկական քննարկման  
համար, վորպեսզի ախտիվի ժողովները  
տևեն վնչ թե 3—4 ժամ, այլ 10—12 ժամ,  
վորպեսզի խոշոր կենտրոններում (Մոսկ-  
վա, Լենինգրադ, Խարկով, Կիև և այլն)  
գումարվեն վնչ միայն քաղաքային,  
այլև շրջանային կուսակալներ, վոր-  
պեսզի շրջանային ախտիվների ժողով-  
ները տևեն վնչ թե 3—4 ժամ, այլ ամե-  
նաքիչը՝ 6—8 ժամ»:

Կենտրոնական Կոմիտեն կուսակցական  
բոլոր կազմակերպություններից պահանջում  
ե կոմունիստների իսկական բոլշևիկյան դաս-  
տիարակություն: Ահագին դեր ունեն կա-  
տարելու կուսակցական ժողովները: Այս ժո-  
ղովները պետք է խնամքով նախապատրաս-  
տել նրանցում քննարկել վնչ թե վերացա-  
կան կամ նեղ-տնտեսական, այլ ներկուսակ-  
ցական ամենակենսական և հրատապ հար-  
ցեր: Ժողովները, վորպես կանոն, պետք է

լինեն դոնդիակ և պիտի հանդիսանան վոր-  
պես կոմունիստների գաղափարական մա-  
կարդակը բարձրացնող մարտական դպրոց:

Գործարանային կուսկոմիտեները, շրջ-  
կոմիտեները և քաղկոմիտեները պարտավոր են  
կազմակերպական և պրոպագանդիստական  
աշխատանքի հարցերով այնպես դբաղվել,  
վորպեսզի այդ աշխատանքն ըստ ամենայնի  
նպաստի կուսակցական ամենալայն մաս-  
սաների ձեռներեցությունը և ինքնագործու-  
նեցությունը:

Կուսակցական կյանքը պետք է հագեց-  
ված լինի խորը գաղափարական բովանդա-  
կություն, պետք է հորդի աղբյուրի պես:  
Այս բանին ամենուրեք կարելի չե հասնել  
յեթե կուսակցական կոմիտեները հրաժար-  
վեն զեկավարման ֆորմալ, կադյոննի մեթոդ-  
ներից: Յեթե նրանք իրենց տրամադրության  
տակ ունենան կուսակցական աշխատողների,  
զեկուցողների, պրոպագանդիստների, ազի-  
տատորների ստուգված կազերը, անխղելի  
կապ հաստատեն սկզբնական կազմակերպու-  
թյունների հետ, կուսակցություն անդամների,

Թեկնածուների, համակրողների հետ: Յեթե նրանք իմանան, թե ինչ է կատարվում սկզբնական կազմակերպութուններում, ապահողեն կատարման խսկական ստուգումը, մասսաների ինֆորմացիան, կարգի գնեն կուսակցական հաշվառումը և ֆնացած ամբողջ «կուսակցական տնտեսութունը»: Կուսակցական կազմակերպութունները պարտավոր են անմիջապես կարգավորել կուսակցական տոմսերի և հաշվառման քարտերի որինակելի պահպանումը:

Լենինի—Ստալինի կուսակցութունը— աշխարհում ամենաուժեղ, ամենահզոր կուսակցութունն է: Նրա ղեկավարութւյան տակ մեր յերկրի բանվոր դասակարգն ու գյուղացիութունը համաշխարհային պատմական հաղթանակներ տարան: Նա ունի բազմաթիվ կարող կադրեր: Նա վայելում է բանվորների և կուտնտեսականների միլիոնավոր մասսաների անսահման վստահութւյնը: Յե՛վ կասկած չկա, վոր կուսակցութւյնը վճռականորեն ու արագ կերպով մինչև վերջը կհաղթահարի օպորտունիս-

տական բարեհոգութւյան, ինքնահանգստացման տարրերն իր կազմակերպութւյնների առանձին ողակներում, ել ավելի կամբապնդի պրոլետարիատի դիկտատուրայի որգանները և կազմակերպական ու դաստիարակչական աշխատանքին կհաղորդի բոլշևիկյան գաղափարայնութւյն ու թափ:

(«Պրավդա»-ի № 31-ի առաջնորդը)

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀամԿ(բ)Կ-ի Լենինգրադի Բաղաճային Կոմիտեյի 1935 թ. մարտի 29-ի վարժուումը՝ ՀամԿ(բ)Կ-ի Պետրոգրադի, Վիբուրգի, Վալդարոսիալ, Մոսկվայի, Սմոլնիի յեվ Կեմերովսկայի քաղաքների կազմակերպչական և կազմակերպչական անդամների մասին

Լսելով և քննարկելով ՀամԿ(բ)Կ-ի Պետրոգրադի, Վիբուրգի, Վոլոգդարսկու, Մոսկվայի, Սմոլնիի և Կեմերովսկայի շրջկոմիտեի հաշվետու զեկուցումները՝ կուսակցական-կազմակերպական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքի դրուժյան մասին, ՀամԿ(բ)Կ-ի Լենինգրադի քաղաքային կոմիտեյի պլենումը նշում է, վոր սկսած 17-րդ կուսահամագումարի ժամանակից շրջանային կուսակցական կազմակերպությունները վորոշ հաջողություններ են ձեռք բերել կազմակերպական-կուսակցական աշխատանքի

ու Լենինգրադի պրոպագանդայի բարելավման գործում (ուժեղացել է շրջկոմների և կուսկոմիտեի ուղղորդությունը դեպի կուսակցական աշխատանքի հարցերը, ավելի լավ են նախապատրաստվում կուսակցական ժողովները, կուսակցության անդամներն ավելի են ընդգրկվում մարքս-Լենինյան ուսմամբ):

Միևնույն ժամանակ ՀամԿ(բ)Կ-ի Լենինգրադի քաղաքային կոմիտեյի պլենումն ընդգծում է, վոր շրջանային կուսակցական կազմակերպությունները մինչև այժմ դեռ գործնական համապատասխան յեզրակացություններ չեն արել 17-րդ կուսահամագումարի վորոշումներից և ընկ. Մտալինի այն ցուցումներից, վորոնք պահանջում են կազմակերպական աշխատանքը հասցնել քաղաքական ղեկավարության մակարդակին և վճռաբար բարձրացնել գաղափարական-քաղաքական դաստիարակության վորակը:

Լենինգրադի կուսակցական կազմակերպության առջև դրված հիմնական խնդիրների հաջող լուծումն է. ժողովրդատնտեսա-

կան պլանի կատարումը և արդյունաբերութ-  
յան ու գյուղատնտեսութեան տեխնիկա-  
կան վերակառուցման ավարտումը, կոլտըն-  
տեսութեաններէ ու խորհրտնտեսութեաննե-  
րի ամբացման բազայի վրա Լենինգրադի  
մարզը գյուղատնտեսութեան տեսակետից  
արտադրող մարզ դարձնելը, Լենինգրադի  
սոցիալիստական վերակառուցման ավար-  
տումը, բանվորներէ ու կոլտնտեսականներէ  
կուլտուրական և նյութական մակարդակի  
հետագա բարձրացումը, յերիտասարդութեան  
ու յերեխաների բոլջեիկյան դաստիարակու-  
թեան խնդիրները, թշնամի դասակարգերի և  
մասնավորապէս այժմ ջախջախված զինով-  
յեղական հակահեղափոխական ընդհատակի  
և ցարական ու բուրժուական ռեժիմի  
թափթփուկներէ վոչնչացումը, Լենինգրադը  
ԽՍՀՄ-ի պաշտպանութեան բերդի վերածե-  
լը, Լենինգրադի կազմակերպութեան՝ վոր-  
պես մայրաքաղաքային կազմակերպութեան՝  
հատուկ պատասխանատւութեանը վոչ  
միայն իր կարիքներէ, այլև ամբողջ յերկրի  
կարիքներէ համար կազրեր կոփելու գոր-

ծում, — այս բոլորը Լենինգրադի կուսկազ-  
մակերպութեանից պահանջում և համառո-  
րեն պայքար մղել վերացնելու համար կուս-  
աշխատանքի մի շարք բնագավառներէ հետ  
մնալը, վորն առանձնահատուկ ուժգնու-  
թեամբ մերկացվեց ընկ. Կիրովի չարանհնդ  
սպանութեան հետ կապված անցքերը քըն-  
նարկվելիս, և մանավանդ ուժեղացնել կու-  
սակցական կադրերի պատրաստումն ու վճա-  
բար ամրացնել ամբողջ գաղափարական-  
քաղաքական և կազմակերպական աշխա-  
տանքը կուսակցութեան անդամներէ միջև:

Մինչև վերջին ժամանակներս կուսակցա-  
կան-կազմակերպական աշխատանքի կարե-  
վորագույն թերութեանն և հանդիսանում  
կուսակցական կադրերի բաժիններէ բացա-  
կայութեանը՝ ինչպէս քաղկոմում, այնպէս  
եւ շրջկոմներում: Այդպիսի բաժիններէ բա-  
ցակայութեանը չէր կարող չթուլացնել կու-  
սակցական կադրեր աճեցնելու, ընտրելու և  
բաշխելու ամբողջ աշխատանքը, չթուլացնել  
քաղկոմի ու շրջկոմներէ ամենորջա կապն  
սկզբնական կուսկազմակերպութեաններէ

հետ, դա չէր կարող առաջ չբերել նոր կուսակցական կադրերի և մանավանդ շրջանային ու քաղաքային մասշտաբի կադրերի աճման ու առաջ քաշման հետ մնալը արագորեն աճող այն պահանջներին, վորոնք առաջադրում է Լենինգրադի կուսակցական կազմակերպությունը:

Մի շարք կուսակցական կազմակերպությունների աշխատանքի պրակտիկայում կազմակերպական-կուսակցական աշխատանքի և կուսակցության անդամների բոլշևիկյան դաստիարակության հարցերը հետ եյին մղվել յերկրորդ տեղը և առաջին պլանն եյին քաշվել ձեռնարկություններում ու հիմնարկներում կատարվող տնտեսական ու խորհրդային ուղերատիվ աշխատանքի հարցերը, վորը չէր կարող չթուլացնել այդ կազմակերպությունների մարտունակությունը, չթուլացնել կուսակցական կազմակերպությունների՝ վորպես բանվորական մասսաների մարտական կազմակերպիչներին՝ դերը: Կուսակցական աշխատանքում առաջել կամ նվազ չափով դեռ լայն տարածում են

զանում ղեկավարություն զբառնյալային-բյուրոկրատիկ, ֆորմալ մեթոդները: Կուսակցական աշխատանքում ղեկավարություն զբառնյալային-բյուրոկրատիկ մեթոդների ամենացայտուն արտահայտությունն է հանդիսանում վոչ մարքսիստական, վոչ բոլշևիկյան այն պրակտիկան, վոր կուսակցության անդամների ու կուսակցական ակտիվի դաստիարակման ամենորյա քրտնաջան, հոգատար աշխատանքը վոխարինվում է թղթային ղեկավարություն ու վարչարարության և կուսուսուցումը կազմնի դարձնելու մեթոդներով, վորն արդյունք է կուսակցական կադրերի և կուսակցության շարքային անդամների մեջ կատարվող դաստիարակչական ու գաղափարական-քաղաքական աշխատանքի թերազնահատման:

Լենինիլզմի պրոպագանդայի զրվածքում պատշաճ չափով ապահովված չի յեղել կուսակցության պատմության ուսումնասիրումը, վորը հանդիսանում է Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի ուսմունքը յուրացնելու բանալին, և մանավանդ մեր կուսակ-

ցության գործունեյության հետհոկտեմբե-  
րյան շրջանի ուսումնասիրումը, վորը վճռա-  
կան նշանակութիւն ունի կուսակցության  
կյանքում և աշխատանքում: Դրանով իսկ  
առանց ուսումնասիրման և մնացել կուսակ-  
ցության պայքարի կարևորագույն շրջանը,  
վորպիսի հանգամանքը չէր կարող չթու-  
լացնել կուսակցական կազմակերպության  
անդամների գաղափարական զինվածութիւ-  
նը, չէր կարող չդժվարացնել կուսակցու-  
թյան թշնամիներէ մերկացումը:

Այդ վկայում ե, վոր կուլապրոպաների  
աշխատանքում վորոշ տարածում են գտել  
կուսակցական լուսավորության գործի  
համար ֆլասակար՝ լենինիզմի պրոպագան-  
դան մարտական քաղաքական խնդիրնե-  
րից կտրելու տենդենցներ, վոր պրոպա-  
գանդիստական աշխատանքում ուժեղ են  
բողքեիզմին վոչ հատուկ ակադեմիկ և սխո-  
լաստիկ սովորույթներ: Պրոպագանդիստա-  
կան աշխատանքի մեթոդներում վերին աւ-  
տիճանի մեծ նշանակութիւն են ստացել  
աշխատանքի զուտ ուսումնական դպրոցա-

կան մեթոդները, իսկ աշխատանքի խմբա-  
կային մեթոդները և դասախոսութիւննե-  
րից հետո կատարվող զրուցները հետ են  
մղված յեղել յերկրորդ պլանը: Կուսակցա-  
կան կոմիտեները սահմանափակվել են մեծ  
մասամբ ձևականորեն ստուգելով կոմունիստ-  
ների քանակական ընդգրկումը կուսակցա-  
կան լուսավորության ցանցում, վերահսկե-  
լով հաճախումներին, սահմանափակվել են  
գործի տեխնիկական կողմով, առանց ստու-  
գելու պրոպագանդիստական կադրերի աշ-  
խատանքի գաղափարական բովանդակու-  
թիւնը, կադրեր, վորոնք իրենք կարիք ու-  
նեն վերադաստիարակման և ուսուցման մեծ  
աշխատանքի:

Կուսակցական կազմակերպութիւնների  
աշխատանքում պատշաճ ուշադրութիւն չի  
ապահովված կոմյերիտմիության դեկավար  
կադրերի ընտրության ու դաստիարակման  
գործի նկատմամբ, ինչպես և կուսակցական  
կադրերին կոմյերիտական կազմակերպու-  
թյան մեջ կատարվող կազմակերպական-  
դաստիարակչական աշխատանքի մեջ լայնո-

րեն ներգրավելու գործի նկատմամբ, վորի հետևանքով կոմյերիտականների դաստիարակման կարևորագույն գործն ամենուրեք գտնվում ե հում ու անվարժ կադրերի ձեռքում:

Կուսակցական աշխատանքի այդ բոլոր խոշոր թերություններն առանձնապես ուժգին կերպով յերևան բերվեցին այն ժամանակ, յերբ քաղաքային կուսակցական կազմակերպությունը քննարկում եր ընկ. Կիրովի չարանենգ սպանության հետ կապված անցքերի դասերը: Այդ թերությունները վկայում եյին, վոր թուրացել ե հեղափոխական զգոնությունը և կուսակցական կազմակերպության առանձին ողակներն են թափանցել ոպորտունիստական բարեհոգության ու ինքնահանգստացման տարրեր:

Մեր կազմակերպությունը, ընկ. Կիրովի չարանենգ սպանության հետ կապված անցքերի դասերը քննարկելու պրոցեսում ծավալելով կուսակցական աշխատանքի և ղեկավարության պրակտիկայի թերությունների բոլորիկյան լայն ինքնաքննադատությունը,

բարձրացրեց իր շարքերի ակտիվությունը, ուժեղացրեց հեղափոխական զգոնությունը, մեծ աշխատանք կատարեց կազմակերպությունը հակահեղափոխական զինվյեվական խմբակի թափթփուկներից մաքրելու ուղղությամբ, ղեկավարության համար առաջ քաշեց նոր կուսակցական կարգեր և բարձրացրեց իր պահանջները կուսակցական աշխատանքի ու կուսակցական ղեկավարության վորակի նկատմամբ:

Պլենումը պարտավորեցնում ե կուսակցական բոլոր կազմակերպություններին՝ ամրացնել կուսակցական մասսաների հարաճուն ակտիվությունն ու զգոնությունը, վերացնելով վերջին անցքերի դասերը քննարկելու պրոցեսում մերկացված խոշոր թերությունները կուսակցական աշխատանքում, խորապես ու բազմակողմանի կերպով բարելավելով ներկուսակցական աշխատանքը և կուսակցական ղեկավարությունը:

Միմիայն այդ հիման վրա կարելի յե մինչև վերջը հաղթահարել ոպորտունիստական բարեհոգության ու ինքնահանգստաց-

ման տարրերը մեր կազմակերպութեան առանձին ողակներում, ամբապնդել պրոլետարիատի դիկտատուրայի որգանները և տնտեսութեան, կուլտուրայի ու լայն մասսաների մեջ կատարվող աշխատանքի բոլոր ճյուղերի ղեկավարութեանը:

Կուսակցական-կազմակերպական աշխատանքի կարևորագույն խնդիրն է արմատապես բարելավել կուսակցական կադրերի աճեցման, առաջ քաշման ու բաշխման գործը, բարձրացնել կուսակցութեան անդամների քաղաքական մակարդակը, ստուգել, թե ինչպես են կատարվում քաղկոմի ու շրջկոմների վորոշումներն սկզբնական կուսակցական կազմակերպութեաններում, բարելավել ղեկավար կուսակցական որգաններին ֆորմացիան՝ կուսկազմակերպութեան ներկուսակցական կյանքի մասին:

Պլենումն ամբողջովին ու լիովին հավանութեան է տալիս Կենտրոնական Կոմիտեյի վորոշմանը՝ Լենինգրադի քաղկոմում ու շրջկոմներում կուսակցական կադրերի բաժիններ ստեղծելու մասին, և քաղկոմի ու

շրջկոմների առաջնակարգ խնդիրն է համարում՝ համարել կուսակցական կադրերի բաժինները կուսակցական վորակյալ աշխատողներով:

Պլենումը հետևյալ դործնական ձեռնարկումներն է դնում ռայոնական կազմակերպութեաններին և կուսակցական կադրերին որ ստեղծվող բաժինների առջև.

1. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ ԱՃԵՑՆԵԼՈՒ, ԸՆՏՐԵԼՈՒ ՅԵՎ ԱՌԱՋ ՔԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ղեկավար կուսակցական որգանները և կադրերի բաժինները պետք է վերջ տան կուսակցական կադրերի ընտրութեան, բաշխման ու առաջ քաշման այն պրակտիկային, յերբ այդ կարևորագույն գործը վերահանձնարարվում է յերկրորդական ու սակավ վորակյալ աշխատողներին և յերբ այս կամ այն պատասխանատու կուսակցական աշխատանքին աշխատող նշանակելու համար բավական է համարվում ոգտագործել աշխատողների վերաբերյալ յեղած ձևական անկե-

տային տվյալները, առանց նախապես ան-  
ձամբ ծանոթանալու աշխատողի հետ, ա-  
ռանց հիմնավորապես ստուգելու նրան կեն-  
դանի գործում: Ներքևից մինչև վերև բոլոր  
կուսակցական ղեկավարների և կադրերի  
բաժինների գլխավոր պարտականությունն  
է՝ որ-ավուր անձամբ ուսումնասիրել կու-  
սակցական կադրերը: Յուրաքանչյուր ղե-  
կավար պետք է աշխատանքից ճանաչի  
վոչ միայն այն կադրերին, վորոնք արդեն  
ղեկավարում են կուսակցական աշխատանքի  
այս կամ այն բնագավառը, այլև այն աշ-  
խատողներին, վորոնց կարելի յե առաջ քա-  
շել ավելի խոշոր աշխատանքի:

2. Անհրաժեշտ է ապահովել կուսակցա-  
կան կադրերի հաշվառման ձեռն սխտեմը  
ինչպես սկզբնական կուսակցական կազմա-  
կերպություններում, այնպես ել շրջումի ու  
քաղկոմի ապարատում, նրանց սխտեմատիկ  
ուսումնասիրումը գործնական աշխատանքի  
պրոցեսում: Պլենումը հանձնարարում է քաղ-  
կոմի բյուրոյին՝ յերկու տասնորյակում շրջ-  
կոմների հետ միասին սահմանել սկզբնական

կազմակերպություններում, շրջկոմներում ու  
քաղկոմի ապարատում կուսակցական կադ-  
րերին հաշվառման յենթարկելու կարգը և  
հաշվառման յենթակա աշխատողների կոն-  
տինգենտը:

3. Վերացնել այն դրությունը, վորի  
պայմաններում մարդկանց ընտրության ու  
բաշխման կարիվորագույն հարցերն անց են  
կացվում կուսակցական կոմիտեների կող-  
մից հարցումներով կատարվող քվեարկու-  
թյամբ: Սահմանել, վոր անձնական կարեու-  
րագույն նշանակությունների բոլոր հարցերը  
պետք է դրվեն ու քննարկվեն բյուրոնե-  
րի և կուսակցական կոմիտեների նիստե-  
րում:

4. Պլենումը սահմանում է, վոր աշխա-  
տանքի ձախողումների շոշափելի քանակը  
բացատրվում է կադրերի չմտածված ու պա-  
տահական ընտրությանը: Այդ դրությունից  
դուրս գալու սովորական յեղքն է հանդիսա-  
նում աշխատողների հաճախակի փոփոխու-  
մը, վոր փնասակար է գործի համար:

Պլենումը նախազգուշացնում է, վոր

կուսակցական կադրերի անբավարար, անհաշոյ ընտրութեան համար, ինչպէս և այդ պատճառով կադրերի տեղի ունեցող հաճախակի փոփոխման համար հատուկ պատասխանատվութիւն են կրում կուսակցական կոմիտեաների քարտուղարները և կուսակցական կադրերի բաժնի վարիչները:

Պլենումն առաջարկում է.

ա) վորպեա կանոն՝ սահմանել, վոր չուղղվող այս կամ այն աշխատողին փոխելու հարցը լուծվի նրան փոխարինելու հարցի հետ միաժամանակ.

բ) վորպեա միջոցներից մեկն ընդունել չուղղված աշխատողներին ավելի ցածր և նվազ պատասխանատու աշխատանքի փոխադրելը:

5. Պլենումը շրջանային կուսակցական կազմակերպութիւններին առջև խնդիր է դնում արդէն ամենամոտ ժամանակում ստեղծել շրջաններում առաջ քաշման ուղերվ՝ յուրաքանչյուր շրջանում 50-ից մինչև 100 հոգի, այն հաշվով, վոր հատուկ աշխատանք կատարվի այդ ընկերների հետ, ոգ-

նութիւն ցույց տրվի նրանց աճմանն ու դաստիարակմանը և նրանք ներգրավեն շրջանի ղեկավար աշխատանքում (տալ պատասխանատու հանձնարարութիւններ, հրավիրել մասնակից-ու խորհրդակցութիւններին և կուսակցական աշխատանքի հարցերի մշակմանը, ոգտագործել նրանց վորպեա զեկուցողներ, արտահաստիքային հրահանգիչներ և այլն):

6. Պլենումն անհրաժեշտ է համարում ավելի լայն չափով ներգրավել քաղկոմի ու շրջկոմների անդամներին և թեկնածուներին քաղկոմի ու շրջկոմների ամենօրյա աշխատանքի մեջ (ստորին կուսկազմակերպութիւնների կողմից քաղկոմների ու շրջկոմների վորոշումների կատարումն ստուգելու գործում, քաղկոմի ու շրջկոմների բյուրոններում և պլենումներում հարցերի նախնական մշակման գործում և այլն):

7. Անհրաժեշտ է սիստեմատիկաբար գումարել կուսակցական ակտիվի համաքաղաքային ու շրջանային ժողովներ՝ կենտրոնական կոմիտեյի վորոշումները, կենտրոն-

դի քաղաքային ու շրջանային կուսակցական կազմակերպությունների աշխատանքի ամենախոշոր հարցերը քննարկելու համար, կազմակերպելով ակտիվներին աշխատանքը՝ ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի 1934 թ. դեկտեմբերի 17-ի այն վորոշման համաձայն, վորն ստում է.

«1) Միայլ և մեր բոլշևիկյան տրադիցիաներին անհամապատասխան համարել այն, վոր վերջին ժամանակներս Համ Կ(բ)Կ-ի Կենտկոմի վորոշումները քննարկելու համար մեր մայրաքաղաքային կենտրոններում սկսել են գումարել վոչ թե քաղաքային կազմակերպությունների ակտիվի ժողովներ, ինչպես այդ լինում էր առաջներում, այլ մարզկոմների ու քաղկոմների պլենումներ՝ «ակտիվի մասնակցությունը»:

2) Ընդունել, վոր այս կասկածելի նորմալությունը թուլացնում է ակտիվի բարոյական-քաղաքական նշանակությունը և վերջինիս դարձնում է մարզկոմի ու քաղկոմի պլենումի բյուրոկրատիկ հավելվածը (գումարվում է վոչ թե ակտիվը, այլ մարզ-

կոմի պլենումը՝ «ակտիվի մասնակցությունը»):

3) Վերականգնել այն հին դրությունը, վորի համաձայն ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի վորոշումները քննարկելու համար, վորպես կանոն, պետք է գումարվեն քաղաքային կազմակերպությունների այն ակտիվները, վորոնք ունեն և պետք է վոր ունենան իրենց առանձնահատուկ քաղաքական նշանակությունը մեր կուսակցության կյանքում:

4) Անհրաժեշտ համարել, վորպեսզի առանց բացառություն բոլոր հանրապետական, յերկրային ու մարզային կենտրոններում ինչպես նաև բոլոր առավել կամ թե պակաս նշանավոր արդյունաբերական կենտրոններում պարտադիր կերպով գումարվեն քաղաքային կուսկազմակերպությունների ակտիվներ՝ ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի Պլենումի վորոշումները քննարկելու համար, վորպեսզի ակտիվները գումարվեն վոչ թե շքահանդեսի և ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի վորոշումներին ձևական-հանդիսավոր հավանու-

Թյուն տալու համար, այլ այդ վորոշումներն իրապես քննարկելու համար, վորպեսզի ակտիվի ժողովները տևեն վոչ Թե 3—4 ժամ, այլ 10—12 ժամ, վորպեսզի խոշոր կենտրոններում (Մոսկվա, Լենինգրադ, Սարևով, Կիեվ և այլն) գումարվեն վոչ միայն քաղաքային, այլև շրջանային կուսակախիվներ, վորպեսզի շրջանային ակտիվները ժողովները տևեն վոչ Թե 3—4 ժամ, այլ ամենաքիչը՝ 6—8 ժամ»:

## 2. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պլենումն ընդգծում է կուսակցական ժողովների բացառիկ նշանակությունը կուսակցության անդամների բոլշեիկյան դաստիարակության գործում և առաջարկում է բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ իրենց աշխատանքի հիմքը դարձնել կազմակերպական-կուսակցական և գաղափարական-դաստիարակչական աշխատանքի հարցերը, ապահովելով դրված հարցերի մանրագնին ու բազմակողմանի քննարկումը՝ ծավալուն ինքնաքննադատության հիման վրա:

Անհրաժեշտ է ընդարձակել համագործարանային կուսակցական ժողովներ գումարելու պրակտիկան, քննարկելով այդ ժողովներում տվյալ սկզբնական կուսակազմակերպության կուսակցական կյանքի կարևորագույն հարցերը և կուսակցության ու կառավարության հիմնական վորոշումները, ներգրավելով այդ ժողովներում մարդային, քաղաքային ու շրջանային աշխատողներին:

Կուսակցական ժողովները, վորպես կանոն, պետք է գոնիակ լինեն: Կուսակցական ժողովներում գործնական աշխատանքի բոլոր հարցերի քննարկումն անհրաժեշտ է ամենասերտ կերպով շաղկապել կուսակցության քաղաքականության հիմունքներին:

Կուսակցական կոմիտեները, ցեխային կուսակազմակերպիչները և խմբակային կուսակազմակերպիչները պետք է ժամանակին ու բազմակողմանի կերպով նախապատրաստեն կուսակցական ժողովները, հաղորդելով կուսակցության բոլոր անդամներին ժողովի սահմաններում վոչ ուշ քան ժողովից 2—3 օր օրակարգը:

առաջ, նախապես լուսաբանելով դրված հարցերը գործարանային մամուլում, լայնորեն ներդրավելով կուսակցութեան անդամներին կուսակցական ժողովների հարցերի ու վճարողներին նախապատրաստման գործում և այլն: Կուսակցական կազմակերպութեան ներքև կուսակցական ժողովներն անցկացնելիս պետք է ավելի շատ ուշադրութեամբ նվիրեն տվյալ կազմակերպութեան կուսակցական կյանքի հարցերի քննարկմանը:

Անհրաժեշտ է ապահովել կուսակցական ժողովների համար ամենայն խնամքով ղեկավարողներ պատրաստելու գործը:

Կուսակցական ժողովներում պետք է ապահովված լինի դրված ղեկավարողներին քննարկումը, ընդ վերում կուսակցական ժողովի ընդունած վճարողներն անպայման պետք է հաշվի առնեն կուսակցութեան անդամների այն առաջարկները, վեր արել են նրանք վիճարանութեան ներքև ժամանակ:

Պլենումն ընդգծում է, վեր առանձնապես կարևոր է սխտեմատիկաբար ստուգել կուսակցական ժողովներում ընդունված վճարող

շուկաների կատարումը և կուսակցական ժողովներում դնել կուսակցությունների և կուսակցական կերպիչների ղեկավարողները՝ այդ վճարողներին կենսագործման մասին:

3. ՍԿԶԲԱԿԱՆ ԿՈՒՍԱԿԿՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԿՈՍԻ ՈՒ ՇՐՋԿՈՄՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1, Յեղնելով կուսակցութեան 17-րդ համագումարի և ընդ. Ստալինի այն ցուցումներից, թե կատարման ստուգման ճիշտ կազմակերպումը վճարողական նշանակութեամբ ունի բյուրոկրատիկ մեծ դրասենյակայնութեան դեմ մղվող պայքարում և աշխատանքի ճեղքվածքները կանխելու գործում, պլենումն առաջարկում է քաղկեմի բյուրոյին և շրջկոմներին՝ շատ ավելի մեծ ուշադրութեամբ նվիրել կատարման ստուգման գործին: Կատարման ստուգման հետ կապված հարցերը, ստորին կուսակցական կերպիչութեան ներքև և կուսաշխատանքի այս կամ այն բնագավառի ղեկավարների հաշվետվութեան ներքև պետք է գլխավոր անդր գրավեն

Քաղկոմի բյուրոյի ու շրջկոմներէ աշխատանքում, ընդ վորում անհրաժեշտ ե ղեկավար կուսակցական կազմակերպություններում քննարկման դնել վոչ միայն ստորին կուսակցական կազմակերպություններէ ընդհանուր հաշվետու զեկուցումները, այլև գըլխավորապես քաղկոմի կամ շրջկոմի այս կամ այն վորոշման կատարման վերաբերյալ զեկուցումները: Անհրաժեշտ համարել, վոր քաղկոմի ու շրջկոմներէ վորոշումներն սկզբնական կուսակցական կազմակերպության կողմից կատարվելու ընթացքի վերաբերյալ զեկուցումները, վորպես կանոն, լսվեն քաղկոմի ու շրջկոմներէ բաժիններէ զեկուցումներին հարակից կերպով:

2. Համկ(բ)ի-ի շրջկոմը, վորոշում ընդունելով սկզբնական կուսակցական կազմակերպություններէ հաշվետու զեկուցումներէ կամ ներկուսակցական աշխատանքի առանձին ընագավառներէ առթիվ, պետք ե ապահովի վորոշումներէ կոնկրետ բնույթը, վորը հնարավորություն տա առանձին կազմակերպություններէ աշխատանքի որինա-

կով բարձրացնելու և բարելավելու մյուս կուսակազմակերպություններէ կուսակցական աշխատանքի վորակը, դատարարակելու կուսակցության անդամներէ ամբողջ մասսան:

Շրջանային կուսակցական կազմակերպություններին շրջկոմներէ կարևորագույն վորոշումներէ շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու նպատակով անհրաժեշտ ե այդ վորոշումները քննարկման դնել կուսակցական ժողովներում, մասնակից դարձնելով դրանց շրջկոմի անդամներին, շրջկոմի ղեկավար աշխատողներին, հրահանգիչներին, ինչպես և հրապարակել այդ վորոշումները «Լենինգրադսկայա Պրավդա»-յում:

Անթույլատրելի համարել վերագաս կուսակցական կազմակերպություններէ դերեկատիվները մեքենայորեն արտադրելը, այլ այդ վորոշումները դնել սկզբնական կուսակցական կազմակերպություններում՝ քննարկելու և գործնականորեն իրականացնելու:

3. Քաղկոմի և շրջկոմներէ հրահանգիչներէ աշխատանքը պետք ե այնպես դրված լինի, վոր ապահովի սկզբնական կուսակցա-

կան կազմակերպությունների կողմից քաղ-  
կոմի ու շրջկոմիների վորոշումների կատար-  
ման սխտեմատիկ ստուգումը:

4. Հավանություն տալով կոմունիստների  
ինքնահաշվետվության կիրառմանը վորպես  
կուսակցության յուրաքանչյուր անդամի աշ-  
խատանքի կուրկտիվ կուսակցական ստուգ-  
ման և կուսակցական կազմակերպության  
կողմից նրան ցույց տրվող ոգնության ձևե-  
րից մեկին, քաղկոմի պլենումն առաջար-  
կում և ապահովել ինքնահաշվետվություն-  
ների այնպիսի դրվածք, վոր դրանք ընդ-  
գրկեն կոմունիստի՝ նախ և առաջ վոր-  
պես կուսակցության անդամի ու մասսանե-  
րի բուլեիկյան կազմակերպչի աշխատան-  
քը (մասնակցությունը կուսակցական կյան-  
քին, աշխատանք ինքն իրեն վրա, դաստիա-  
րակչական աշխատանք անկուսակցական-  
ների մեջ):

4. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ  
ԲԱՐԵԱՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Սկզբնական կուսակցական կազմակեր-

պությունների աշխատանքի ճիշտ ղեկավար-  
ման կարևորագույն տարրն և հանդիսանում  
կանոնավոր ինֆորմացիան քաղկոմում և  
շրջկոմներում: Կուսակցական կազմերի բա-  
ժինները պետք և կանոնավորեն սկզբնա-  
կան կուսակցամակերպությունների նյութե-  
րի (կուսկոմիների և կուսակցական ժողովնե-  
րի, բանվորական ժողովների արձանագրու-  
թյունների, կուսակցական և բանվորական  
ժողովներում տրվող տոմսակներ, գործարա-  
նային մամուլ և այլն) սխտեմատիկ ու-  
սումնասիրումը, պետք և ապահովեն կու-  
սակցական աշխատանքի վորձի սխտեմա-  
տիկ հաշվառումն ու ընդհանրացումը, կու-  
սակցության անդամների և անկուսակցական  
բանվորների ու բանվորուհիների կարիքնե-  
րի ու տրամադրությունների հաշվառումը,  
այս կամ այն կուսակցական կազմակերպու-  
թյան աշխատանքում գոյություն ունեցող  
թերությունների ու սխալների մասին ժա-  
մանակին անադանգելը, նաև ստորին կու-  
սակցական կազմակերպությունների պրակ-  
տիկայում ծագող հարցերի առաջ քաշումը:

Անհրաժեշտ է ինֆորմացիոն աշխատանքի կազմակերպման մեջ ներգրավել արտահաստիքային աշխատողներին:

Քաղկոմներին ու շրջկոմներին գործունեությունից զերբերյալ սկզբնական կուսակցական կազմակերպություններին տրվող ինֆորմացիան բարելավելու նպատակով պլենումն անհրաժեշտ է համարում:

ա) Քաղկոմի ու շրջկոմներին կարևորագույն վորոշումները հրապարակել կուսակցական մամուլում:

բ) «Լենինգրադսկայա Պրավդա»-յում ընդարձակել «Կուսակցական կյանքի բաժինը»:

գ) «Կուսակցական կյանքի բաժնում» ունենալ յեթաբաժին «Համկ(բ)»-ի քաղկոմում և շրջկոմներում» վերնագրով:

5. ՍԿՁԲԵԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿԱԶՄԱԿԵՐՊԻԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Ընդգծելով սկզբնական կուսակցական կազմակերպություններում կուսակցական

կոմիտեներին՝ վորպես կոլեկտիվ դեկավարուած թյան մարմիններին և րոշելիկյան կադրերի զաստիարակման դպրոցի դերին ու նշանակության բարձրացման անհրաժեշտությունը, քաղկոմի պլենումն անհրաժեշտ է համարում:

ա) Սկզբնական կուսակցական կերպուած յուններին կուսկոմներին աշխատանքը կազմակերպել այնպես, վոր առանց որակարգը բարձրացնելու հարցերով ծանրաբեռնելու, ապահովել կուսակցական կյանքի կարևորագույն հարցերի մանրազնին քննարկումը կուսակցական կոմիտեներին նխատրում:

բ) Կուսակցական կոմիտեյի բոլոր անդամներին, ինչպես և գործարանային կուսակցական ակտիվին լայն կերպով ներգրավել կուսակցական կոմիտեյի նխատր որակարգի հարցերի նախնական մշակման ու նախապատրաստման գործում:

գ) Մխտեմատել կերպով լսել կուսակցական կոմիտեներին հաշվետուությունները՝ ցերային կուսակցական կազմակերպություններին առաջ, ինչպես վորոշ ժամանակամի-

Չոցում կուսակցական կոմիտեաների կատարած վողջ աշխատանքի, այնպես և կուսակցական կոմիտեայի աշխատանքի առանձին, առավել խոշոր հարցերի վերաբերյալ, հաշվետու գեկուցումներում ներգրավելով կուսակցական կոմիտեայի բոլոր անդամներին:

դ) Կուսակցական կոմիտեաների բոլոր անդամներին սիստեմատիկաբար ներգրավել մեր կուսակցական աշխատանքի բարելավման ասպարիդում ցեխային կուսակցական կազմակերպություններին ցույց տրվող ոգնության կազմակերպման գործին, հետագայում այս կամ այն ցեխային կուսակազմակերպության մեջ կատարվող կուսակցական աշխատանքի հարցերը քննության առնելով կուսկոմիտեայի նիստերում:

ե) Կիրառել ցեխային կուսկազմակերպություններում կուսակցական կոմիտեայի կարևորագույն վորոշումներին սիստեմատիկ քննարկման պրակտիկան, այդ վորոշումներին քննարկմանը ներգրավելով կուսակցական կոմիտեայի բոլոր անդամներին:

2. Ստորին կուսակցական կազմակեր-

պությունների մարտունակութունը, ստորին կուսակցական կադրերի աճումն ու ամրացումը, նրանց պատրաստման ու աճեցման գործում կուսակցական կոմիտեայի ու շրջկոմի պատասխանատվության բարձրացումն ապահովելու նպատակով սահմանել, վոր

ա) Խմբակային կուսկազմակերպիչները հաստատվում են սկզբնական կուսկազմակերպության կուսակցական կոմիտեայի կողմից: Նրանց տեղափոխությունը կարող է կատարվել միմիայն կուսակցական կոմիտեայի վորոշմամբ: Ցեխային կուսկազմակերպիչները հաստատվում են շրջկոմի կողմից և տեղափոխվում միմիայն շրջկոմի համաձայնությամբ:

բ) Կուսակցական կոմիտեն յուրաքանչյուր ձեռնարկության մեջ առանձնացնում է լավագույն խմբակային կուսկազմակերպիչներին՝ նրանց պատրաստելու և ցեխային կուսկազմակերպիչների աշխատանքին առաջ քաշելու համար: Շրջկոմը և նրա կուսակցական կադրերի բաժինը պետք է յուրա-

քանչյուր ձեռնարկութեան մեջ ուսումնասիրեն լավագույն ցեխային կուսկազմակերպիչներին՝ նրանց պատրաստելու և գործարանային ու շրջանային մասշտաբով դեկավար կուսակցական աշխատանքի առաջ քաշելու համար:

3. Պլենումը պարտավորեցնում է շրջկոմներին և կուսակցական կոմիտեներին քարտուղարներին՝ կանոնադր կերպով խորհրդակցութեայիններ և գրույցներ անցկացնել ցեխային և խմբակային կուսկազմակերպիչներին հետ՝ վերադաս կուսակցական մարմիններին կարևորագույն վորոշումների վերաբերյալ, դրանով իսկ բարձրացնելով ստորին կուսակցական ակտիվի պատասխանատվութեանը՝ վերադաս կուսակցական կազմակերպութեային վորոշումների կենսագործման համար և բարձրացնելով նրա քաղաքական մակարդակը: Այդ փորձերում ու խորհրդակցութեայիններում անհրաժեշտ է ըստ ելութեային քննութեային առնել ցեխային կուսկազմակերպիչներին և խմբակային կուսկազմակերպիչներին աշխատանքի հարցերը՝ նրանց հետ

միասին քննարկելով ու ձեռնարկումներ մշակելով նրանց առջև կանգնած խնդիրներին հաջող իրականացման ուղղութեամբ:

Պլենումը պարտավորեցնում է շրջանային կոմիտեներին և սկզբնական կազմակերպութեայիններին կուսկոմիտեներին՝ մի շարք ձեռնարկումներ կիրառել, վորոնք գործնականում ապահովեն ցեխային կուսկազմակերպիչներին, խմբակային կուսկազմակերպիչներին ու պրոպագանդիստներին գաղափարական-քաղաքական մակարդակը, ինչպես և նրանց ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացումը (ընդհանուր կրթութեային բարձրացում, ծանոթութեային գեղարվեստական գրականութեային հետ, լավագույն կինո-ֆիլմերին և այլն), կուսկազմակերպիչներին թեթևացնելով իրենց հիմնական կուսակցական աշխատանքի հետ անմիջականորեն կապ չունեցող մի շարք լրացուցիչ պարտականութեայիններին:

4. Պլենումը մատնանշում է, վոր շատ ցեխային կուսկազմակերպիչներին ու խմբակային կուսկազմակերպիչներին աշխատանք

սակցութեանն ամենից մոտ կանգնած ան-  
կուսակցական ակտիվիստներէց, վորոնք  
գործնականում արտադրութեան մեջ ցույց  
են տվել իրենց նվիրվածութեանը կուսակ-  
ցութեանը, սակայն դեռ պատրաստված չեն  
կուսակցութեան մեջ ընդունվելու համար»  
(ՀամԿ(բ) Կ-ի կանոնադրութեանը), — Համ.  
Կ(բ) Կ-ի համակրողներ խմբակներ կազմա-  
կերպելու աշխատանքի նշանակութեանը:

Այս թերագնահատումը հասցրել է նրան,  
վոր շատ ձեռնարկութեաններում չկան հա-  
մակրողներ խմբակներ, իսկ մյուս ձեռնար-  
կութեաններում, վորտեղ կան համակրողնե-  
րի խմբակներ, նրանք չափազանց փոքրա-  
թիվ են և նրանց մեջ կատարվող աշխա-  
տանքին անհրաժեշտ ուշադրութեան չի  
դարձվում: Քաղկոմի պլենումը, մատնանշե-  
լով, վոր համակրողներ խմբակները՝ կոմ-  
յերիտմիութեան հետ միասին՝ կուսակցու-  
թեանը նոր, քաղաքականապես կայուն կո-  
մունիստներով համալրելու հիմնական կա-  
նախներից մեկն են հանդիսանում, առաջար-  
կում է բոլոր կուսակցական կազմակերպու-

թեաններին աշխատանք ծավալել համա-  
կրողների խմբակներ կազմակերպելու ուղ-  
չութեամբ, ամրացնել գոյութեանն ունեցող  
խմբակները, համակրողներին ներգրավել  
գործնական ակտիվ աշխատանքի և ու-  
սուցման մեջ, ընդամին ապահովելով մտած-  
ված, անհատական մտեցումը յուրաքան-  
չյուր ընկերով: Անհրաժեշտ է համակրողնե-  
րի մեջ աշխատելու համար առանձնացնել  
լավագույն կոմունիստներին, վորոնք ըն-  
դունակ են ապահովելու համակրողներ ի-  
դատարարակումը բոլշևիկյան կուսակցակա-  
նութեան ու կարգապահութեան վրոգով:

Պլենումը խոշոր թերութեանն է համա-  
րում այն, վոր մի շարք շրջկոմներ աչքա-  
թող են անում կուսակցական աշխատանքի  
կարևորագույն բնագավառները, վորոնք այդ  
պատճառով հենց հետ մնացող բնագավառներ  
են հանդիսանում: Պլենումը կուսակցական  
աշխատանքի այդպիսի հետ մնացող բնագա-  
վառներ է համարում բնակվարձկոտները,  
բուհերը, բուհները, կոմունալ ձեռնարկու-  
թեանները, շինարարական արդյունաբերու-

թյան ձեռնարկությունները, խորհրդային հիմնարկները, ինչպես նաև արդյունաբերության մանր ձեռնարկությունները, և շրջկոմների ու շաղրությունն և հրավիրում այն բանի վրա, վեր հետ մնացող ձեռնարկություններում աշխատանքն առաջավոր ձեռնարկությունների աշխատանքի մակարդակին հասցնելը շրջանային կուսակցական զեկավարության կարևորագույն խնդիրներից մեկն և հանդիսանում:

6. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՑԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կուսակցական ամբողջ աշխատանքն էլ ալելի բարձր մակարդակի հասցնելու, կուսակցության բոլոր անդամներին հեղափոխական զգոնությունն ու մարտունակությունը բարձրացնելու, կուսակցական կազմակերպության առանձին ողակներում գոյություն ունեցող ինքնահանգստացուցիչ արամադրությունների ու բարեհոգության տարրերը մինչև վերջ վերացնելու համար սկզբնական կազմակերպությունները, Համկ(բ)Կ շրջկոմ-

ներն ու քաղկոմը պետք և ապահովեն կուսակցության անդամներին մարքս-լենինյան դաստիարակության աշխատանքի լուրջ բարելավումը՝ հատկապես կուսակցության պատմության ուսումնասիրման գծով: Առանց կուսակցության պատմության խորն ու բազմակողմանի ուսումնասիրման չի կարելի տիրապետել լենինյան-ստալինյան սոսոսությանը, չի կարելի հասկանալ ու ըմբռնել մեր կուսակցության ընթացիկ քաղաքականությունը, չի կարելի սովորել բոլշևիկներն մերկացնել դասակարգային թշնամուն՝ ինչպիսի գիմակով էլ թեկուզ քողարկված լինի թշնամին:

Չպետք է լինի կուսակցության և վոչ մի անդամ, վորը չիմանա մեր կուսակցության պատմության հիմունքները: Յուրաքանչյուր բոլշևիկյան կազմակերպիչ պետք է առաջին հերթին ամուր գինված լինի կուսակցության պատմությամբ:

Այդ նպատակով պետք է հարկ յեղած բարձրության դնել կուսակցության պատմության ավանդումը կուսակցության ան-

դամների և առաջին հերթին կուսակցական կազմերի շրջանում, մեր կուսակցութեան պատմութեան մեջ յեղած բոլոր ու ամեն տեսակի հակակուսակցական խմբավորումների, կուսակցութեան դժի դեմ պայքարելու նրանց պրիոմների, նրանց տակտիկայի ուսումնասիրումն ու առաջիկա հակակուսակցական խմբավորումների դեմ մեր կուսակցութեան մղած պայքարի տակտիկայի ու պրիոմների ուսումնասիրումը,—տակտիկայի ու պրիոմների, վորոնք հնարավորութեան տվին հաղթահարելու, գլխովին ջախջախելու այդ խմբավորումները: Հարկավոր է, վոր կուսակցութեան անդամները ծանոթ լինեն վոչ միայն այն բանին, թե կուսակցութեանն ինչպես էր պայքարում ու հաղթահարում կազմաներին, եսերներին, մենջեվիկներին, անարխիստներին, այլև այն բանին, թե կուսակցութեանն ինչպես էր պայքարում ու հաղթահարում տրոցկիստներին, «դեմոկրատական ցենտրալիստներին», աջ ուղիւնիստներին, աջ-ձախ այլանդակներին ու դինովյեվականներին, մեր կուսակ

ցութեան պատմութեան մեջ իր նմանը չունեցող այդ խմբակին, վորը յերկերեսանիւթյունն իր ուխտն է դարձրել և գլուխը հակահեղափոխական տեռորիզմի ճահիճը:

Կուսակցութեան պատմութեանն ուսումնասիրելիս հատուկ ուշադրութեան պետք է նվիրվի մեր կուսակցութեան պատմութեան հետհոկտեմբրեան շրջանին:

Լինինը, կոմունիստական կուսակցութեան վորջ աշխատանքը համեմատելով «բարձր գիտելիքների քառամյա դասընթացի» հետ, ասում է.

«Յեթե հաշվելու լինենք դասընթացներով, ապա առաջին դասընթացը յեղել է անցյալ դարի 70-ական թվականներից մինչև 1903 թվականը, սկզբնական ներածական շրջանը՝ նարոգովոյականութեանից, սոցիալ-դեմոկրատիայից և 2-րդ ինտերնացիոնալից դեպի բոլշեվիզմը: Այս—առաջին դասընթացն է:

Յերկրորդ դասընթացը—սկսվում է 1903 թվականից մինչև 1917 թվականը. այստեղ՝ լուրջ նախապատրաստութեան

հեղափոխութեանը և 1905 թվականի հեղափոխութեան առաջին փուլը: Յերրորդ դասընթացը—1917 թվականից մինչև 1921 թվականը, այստեղ կան 4 տարիներ, վորոնք իրենց բովանդակութեամբ ավելի յեն առաջին 40 տարիներից: (Յերկերի ժողովածու, հատոր 26, էջ 409):

Մեր կուսակցութեան պատմութեան ուսումնասիրման ասպարիզում յեղած խոշոր թերութեաններն զգալիորեն բացատրվում են պրոպագանդիստական աշխատանք կատարող կադրերի մեջ կուլտպրոպաների թույլ աշխատանքով: Մի շարք կազմակերպութեաններում չկա պրոպագանդիստների բավականաչափ հոգատար ընտրութեան, ոգնութեան ու վերահսկողութեան՝ նրանց աշխատանքի նկատմամբ:

Պրոպագանդիստին ոգնութեան ցույց տալու և նրա վորակավորումը բարձրացնելու կարևորագույն ողակի—սեմինարների (պրոպագանդիստների դպրոցներ) աշխատանքում կան բազմաթիվ ամենալուրջ թերութեաններ, սեմինարներում ժամանակի մեծ

մասը հատկացվում է պրոպագանդիստների կողմից հերթական պարապմունքների պլաններն արտագրելուն, վորոնք կազմված են լինում սեմինարի ղեկավարի կողմից, ըստ ելուցեան բացահայտորեն անբավարար են քննութեան առնվում խմբակում անցկացնելիք հերթական պարապմունքի հարցերը, անթույլատրելիորեն քիչ են ոգտազործվում կենտրնի ու Ստալինի դրվածքները, անբավարար ուշադրութեան և նվիրվում պարապմունքի մեթոդիկային, անբավարար են ոգտագործվում տեղական նյութերը և այլն:

1. Կուսակցութեան պատմութեան ուսումնասիրման կազմակերպումն ու ղեկավարումը: Շրջկոմներն ու կուսկոմները պետք է կուսակցութեան պատմութեան ուսումնասիրման գործին ներգրավեն առաջին հերթին կուսակցական աշխատողների կադրերին, ապահովեն պրոպագանդիստների մանրազընդին ընտրութեանը, բարելավեն կուսակցութեան պատմութեան ուսումնասիրման ստուգումն ըստ ելուցեան, ապահովեն դասավանդման հարկ յեղած կուսակցական կա-

յունությունն ու տեսական մակարդակը:  
Կուլտուրայի ու լեռնինիզմի պրոպագանդայի բաժինները պետք է վերակառուցեն իրենց աշխատանքը՝ կուսակցութեան պատմութեան ուսումնասիրումը ղեկավարելու ուղղութեամբ: Քաղկոմի ու շրջկոմների կուլտպրոպագանդաբաժինների կարևորագույն խնդիրն է հանդիսանում կուլտպրոպի շուրջն ակտիվի կազմակերպումը՝ կուսակցական լուսավորութեան առաջել վորակյալ պրոպագանդիստ-կազմակերպիչներէց, վորոնք պետք է ճիշտ ղեկավարութեան կազմակերպեն կուսակցութեան պատմութեան ուսումնասիրող կուսակցական ակտիվի խմբակները նկատմամբ, ղեկավարեն պրոպագանդիստների սեմինարները, լուսավորութեան տներն ու կուսակցական կարգնետները, հրահանգեն սկզբնական կազմակերպութեաններին՝ կուսակցութեան պատմութեան ու լեռնինիզմի ուսումնասիրման հարցերի վերաբերյալ և ըստ ելութեան ստուգեն ստորին կուսլուսացանցի աշխատանքը:

2. Կուսակցական կադրերի և կուսակցութեան բոլոր անդամների կողմից կուսակցութեան պատմութեան ուսումնասիրելու պլանումը բոլոր կուսակցական կազմակերպութեաններին առաջ խնդիր է դնում՝ ամենամոտիկ ժամանակում հասնել այն բանին, վոր կուսակցական կադրերը — քաղաքային, շրջանային, գործարանային կուսմիտներին քարտուղարները, ցեխային կուսակազմակերպիչներն ու խմբակային կուսլիններն կուսակցութեան պատմութեան ուսումնասիրող խմբակներում: Ս.յ. կապակցութեամբ անհրաժեշտ է լայնացնել կուսակտիվի խմբակների ցանցը և կոնսուլտացիա կազմակերպել կուսակցութեան պատմութեան անհատական կարգով ուսումնասիրող ակտիվիստներին համար:  
Քաղկոմի պլանումը խոշոր նշանակութեան է տալիս կուսակցական ակտիվի շրջանային և քաղաքային տների աշխատանքի ճիշտ դրվածքին: Անհրաժեշտ է

ամբացնել շրջկոմիտեի ու քաղկոմի ղեկավարութիւնը կուսակառուցի տներն նկատմամբ, կուսակառուցի տներում սխտանատիկաբար դասախոսութիւններ ու կոնսուլտացիաներ կազմակերպել կուսակցութեան պատմութեան ու լեւինիզմի կարեւորագույն հարցերի վերաբերյալ՝ ակտիվի ու պրոպագանդիստների համար:

Քաղկոմի պլենումը հանձնարարում է քաղկոմի կուլտուրայի ու լեւինիզմի պրոպագանդայի բաժնին՝ կուսակառուցի Կենտրոնական տան կից Լեւինիզմի կազմակերպութեան ղեկավար աշխատողների համար կազմակերպել կուսակցութեան պատմութեան հարցերի վերաբերյալ մի շարք սեմինարներ, հատուկ ուշադրութիւն կենտրոնացնելով բոլոր տեսակի հակակուսակցական խմբավորումների դեմ մեր կուսակցութեան մղած պայքարի տակտիկայի ու պրիոմների ուսումնասիրման վրա:

Միեւնոյն ժամանակ անհրաժեշտ է կուսակառուցի Կենտրոնական տանն ստեղծել ու ծավալել կուսակցական շինարարութեան,

տնտեսական շինարարութեան հարցերի, համաշխարհային տնտեսութեան ու համաշխարհային քաղաքականութեան հարցերի վերաբերյալ կազմակերպել, այդ կազմակերպելն կից կոնսուլտացիաներ կազմակերպելով կուսակառուցի համար՝ նրան հետաքրքրող հարցերի շուրջը:

Կուսակցական կազմակերպութիւնները պետք է խնդիր դնեն իրենց առաջ կուսակցութեան պատմութեան ուսումնասիրման գործի մեջ ներգրավելու կուսակցութեան բոլոր անդամներին ու թեկնածուներին: Այդ նպատակով անհրաժեշտ է կազմակերպել կուսակցութեան պատմութեան ուսումնասիրող խմբակներ լրացուցիչ ցանց, մի շարք ձեռնարկութիւններում դասախոսութիւններ կազմակերպել կուսակցութեան պատմութեան վերաբերյալ, ինչպես խմբակներում, այնպես և դասախոսութիւնների մեջ ներգրավելով նաև կուսակցութեան այն անդամներին, վերջինք սովորում են դանազան հանրակրթական, տեխնիկական խմբակներում ու դպրոցներում:

Ղեկավարելով կուսակցութեան պատմութեան ուսումնասիրումը կուսակցութեան բոլոր անդամների ու նախ և առաջ կուսակցական ակտիվի կողմից, կուսակցական կազմակերպութեանները պետք է վճռական պայքար մղեն զաղափարական-դաստիարակչական աշխատանքում յերան յեկող ֆորմալիզմի բոլոր տարրերի դեմ, թույլ չտալով, վոր կուսակցութեան անդամների բոլջևիկյան դաստիարակութեան կարևորագույն գործը «գպրոցականութեան» վերածվի, յերբ կուսակցութեան պատմութեան ուսումնասիրումը կտրվում է կուսակցութեան ընթացիկ մարտական խնդիրներից և յերբ՝ մյուս կողմից, պրոպագանդիստները կուսակցութեան անդամների նկատմամբ կիրառում են առաջադիրութեան «թվանշանների» սխտեմը և այլն: Կուսակցութեան պատմութեանն ուսումնասիրող խմբակներում պետք է ապահովված լինի կուսակցութեան ընթացիկ քաղաքականութեան պարզաբանումը:

Կուսակցական կազմակերպութեանները և նրանց ղեկավարներն ուղղակի և անմիջ-

ջական պատասխանատվութեան են կրում կոմյերիտմիութեան մեջ կուսակցութեան պատմութեան ուսումնասիրման գործի վիճակի համար:

Շրջկոմները և սկզբնական կուսկազմակերպութեանները պետք է ուսուցման կոմյերիտական ցանցն ապահովեն վորակյալ պրոպագանդիստական կադրերով, ստուգեն, թե կոմյերիտական աշխատողների կադրերն ինչպես են ուսումնասիրում կուսակցութեան պատմութեանը, կոմյերիտականները համար սխտեմատիկաբար զեկուցումներ կազմակերպեն կուսակցական կազմակերպութեան ղեկավար աշխատողների կողմից՝ պրոլետարական դիկտատուրայի հաղթանակի համար կուսակցութեան մղած պայքարի կարևորագույն ետապների մասին:

Պլենումը հանձնարարում է Համ Կ(բ)Կ քաղկոմի բյուրոյին քննութեան առնել Համ. ԼԿՅԵՄ-ի քաղկոմի առաջարկը՝ կոմյերիտականների զաղափարական-քաղաքական դաստիարակութեան գործում կուս-

կազմակերպությունների կողմից անհրաժեշտ  
ոգնություն ցույց տալու մասին:

Քաղկոմի պլենումը ՀամԿ(Բ)Կ շրջկոմիների,  
Համ.ԼԿՅՆՄ-ի շրջկոմիների, նաև բուհերի ու  
բսուհիների սկզբնական կուսակցական ու  
կոմյերիտական կազմակերպությունների ու-  
շաղթությունն և հրավիրում՝ բուհերի և  
բսուհիների կուսակցական ու կոմյերիտական  
կազմակերպություններում կուսակցության  
պատմության ուսումնասիրումը լայն կեր-  
պով ծավալելու անհրաժեշտության վրա:

Պլենումն առաջարկում է քաղկոմի կուլտ-  
պրոպագանդային՝ ստուգել և ամրացնել պրո-  
պագանդիստների կազմը բուհերում և բսուհի-  
ներում, նաև բուհերի սկզբնական կուսակազ-  
մակերպություններին ամրացնել սոցստե-  
սական դիսցիպլինների դասատուներ:

3. Պրոպագանդիստների բնագավառի և  
նրանց մեջ աշխատանքի կատարելու մասին:  
Կուսակցության պատմության ուսումնա-  
սիրման ճիշտ դրվածքի համար վճռական  
նշանակություն ունի տեսականորեն զբա-

զետ և կուսակցականորեն կայուն պրոպա-  
գանդիստը:

Պլենումը հանձնարարում է քաղկոմի  
բյուրոյին և շրջկոմիներին՝ խոշորագույն ձեռ-  
նարկություններում կուսակցության պատ-  
մության խմբակները ղեկավարելու, նաև  
պրոպագանդիստների մի շարք սեմինարները  
ղեկավարելու համար առանձնացնել մի  
խումբ ղեկավար-աշխատողներ: Պրոպագան-  
դիստական աշխատանքի մեջ պետք է ներ-  
գրավվեն նաև կարմիր Պրոֆեսուրայի Ինստի-  
տուտում, մարքսիզմի դասընթացներում  
տեսական կրթություն ստացած, բայց  
տվյալ մոմենտում կուսակցական-պրոպա-  
գանդիստական աշխատանքով չզբաղվող ըն-  
կերները:

Կուսակցության պատմության խմբակնե-  
րը ղեկավարող բոլոր պրոպագանդիստները  
պետք է հաստատվեն կուսակցության շրջա-  
նային կոմիտեյի կողմից:

Պրոպագանդիստին ոգնություն ցույց  
տալու հիմնական ձևը պետք է հանդիսա-  
նա սեմինարը, վորի աշխատանքը պետք

ե լինի խմբակի պարապմունքի յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրումն՝ ըստ եյուլթյան, մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատությունների և կուսակցության կարևորագույն վորոշումների հիման վրա: Սեմինարների ղեկավարները, նաև կուսակցական կոմիտեիների ազատված կուլտպրոպագնդատուները պետք է հաստատվեն Համկ(բ)ի քաղկոմի կողմից:

Քաղկոմի պլենումը բոլոր պրոպագանդիստների առաջ խնդիր է դնում՝ դպրոցներում և խմբակներում վորպես հիմնական մեթոդ լայնորեն կիրառել կենդանի զրույցը, զրույցները շաղկապելով Լենինգրադի բանվորների ու բոլշևիկների հերոսական պայքարի պայծառ փաստերի հետ, ոգտագործելով գեղարվեստական գրականությունը, պատմական հուշարձանները, թանգարանները և այլն, հիշելով, վոր Լենինգրադը բացառիկ հնարավորություններ ունի այդ տեսակետից:

Այն ընկերներին, վորոնք իրենց հիմնական աշխատանքին զուգընթաց պրոպագան-

դիստական աշխատանք են կատարում խմբակներում, անհրաժեշտ է ապահովել վեցորյակում առնվազն յերկու ազատ յերեկո՝ խմբակի պարապմունքներին նախապատրաստվելու համար:

Պլենումը յուրաքանչյուր պրոպագանդիստից պահանջում է՝ բոլշևիկորեն կատարել կուսակցության կողմից նրան հանձնարարված պատվալոր ու պատասխանատու խնդիրը, համառորեն աշխատել իր տեսական մակարդակի բարձրացման վրա, խորը կերպով ուսումնասիրել Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի աշխատությունները, կուսակցական պրոպագանդայից վերացնելով ամեն տեսակի պարզացումը, գոեհկացումն ու կազյոնչինան:

Պլենումը հանձնարարում է քաղկոմի բյուրոյին՝ վոչ ուշ ասպրիլի 15-ից մշակել ու հաստատել կուսակցության պատմության պրոպագանդիստների վերապատրաստման կոնկրետ պլանը:

4. Մամուլի մասին: Քաղկոմի պլենումը նշում է կուսակցական աշխատանքի հար-

ցերի լուսաբանման գործում «Լենինգրադ-սկայա Պրավդա» թերթի աշխատանքում գոյություն ունեցող խոշոր թերությունները և հանձնարարում է քաղկոմի բյուրոյին՝ աշխատողներով ամբացնել «Լենինգրադ-սկայա Պրավդա»-յի «Կուսակցական կյանքի բաժինը», նաև «Լենինգրադսկայա Պրավդա»-յին աշխատակցելու համար առանձնացնել ղեկավար կուսակցական ու խորհրդային աշխատողներին:

«Լենինգրադսկայա Պրավդա»-ն պետք է որը-որին իր եջերում լուսաբանի կուսակցական կազմակերպությունների աշխատանքը՝ կուսակցական կադրերի աճեցման, ընտրության ու առաջաշման ուղղությամբ, մերկացնի թերությունները և լուսաբանի կուսակցության անդամների մարքս-լենինյան դաստիարակության կազմակերպման և դրվածքի, նաև անկուսակցականների մեջ ագիտացիոն-մասսայական աշխատանքի դրվածքի ասպարիզում յեղած դրական փորձը, ընդհանրացանի սկզբնական կուսակազմակեր-

պությունների և շրջկոմների աշխատանքի փորձը:

Պլենումը պարտավորեցնում է Համ Կ(բ)Կ շրջկոմներին՝ ուժեղացնել ղեկավարությունը ֆարբիկա-գործարանային մամուլի նկատմամբ, ապահովել թերթերի խմբագիրներին սխտեմատիկ հրահանգումն ու նրանց ոգնություն ցույց տալը, թերթին ակտիվ ամբացնելը և այլն:

Քաղկոմի պլենումն անհրաժեշտ է համարում քաղկոմի կողմից յերկու ժուրնալների հրատարակումը. մեկ ժուրնալ կազմակերպական-կուսակցական աշխատանքի հարցերի վերաբերյալ և մյուսը՝ կուսակցական ուսուցման ու ագիտացիոն-մասսայական աշխատանքի հարցերի վերաբերյալ:

ՀԱՄԿ(Բ)Կ-Ի ՔԱՂԿՈՄՆԵՐՈՒՄ  
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀամԿ(Բ)Կ Կենտրոնի վարչությանը

1. Քաղաքներում բանվորների և աշխատավորության մեջ կազմակերպական ու պրոպագանդիստական աշխատանքն աշխուժացնելու նպատակով անհրաժեշտ գտնել.

ա) քարտուղարություններ կազմակերպել Մոսկվայի ու Լենինգրադի քաղկոմներում՝ կազմված մարզկոմի առաջին քարտուղարից, քաղկոմի առաջին քարտուղարից և քաղկոմի յերկրորդ քարտուղարից.

բ) քարտուղարություններ կազմակերպել 63 քաղկոմներում՝ կազմված քաղկոմի առաջին ու յերկրորդ քարտուղարներից և քաղկոմի կուլտպրոպ բաժնի վարչից:

2. Ի գիտություն ընդունել Կենտկոմի

և Մոսկվայի ու Լենինգրադի մարզարկոմների ղեկավար կուսմարմինների բաժնի հաղորդագրությունն այն մասին, վոր կուսակցական կադրերի բաժիններ Մոսկվայի և Լենինգրադի քաղկոմներում ստեղծված, լրիվ կոմպլեկտավորված են աշխատողներով և արդեն անցել են աշխատանքի:

3. Հաժանություն տալ Մոսկվայի և Լենինգրադի քաղկոմներին կուսակադրերի բաժինների կառուցվածքի նախագծին:

4. Ի գիտություն ընդունել, վոր Կենտկոմի ղեկավար կուսմարմինների բաժնի հրահանգիչներին շրջագայության հետևանքով Գորկու, Մարատովի, Ազով-Սեվձոժյան յերկրկոմները, Դսեսպրոպետրովսկի, Չելյաբինսկի և Սրևմոյան մարզկոմներն ստեղծել են քաղկոմների կուսակադրերի բաժիններ և լրիվ կոմպլեկտավորել են այդ բաժիններն աշխատողներով:

5. Նկատողություն անել Ռոստովի քաղկոմի քարտուղար ընկ. Կուկրյավցեվին, Իվանովի քաղկոմի քարտուղար ընկ. Սոկոլինսկուն և Պերմի քաղկոմի քարտուղար

ընկ. Գոլիշեվին՝ մեկ ամսվա ընթացքում կուսկադրերի բաժիններ կազմակերպելու վերաբերյալ Կենտկոմի վորոշումը չկատարելու համար:


6. Հաստատել Կենտկոմի ղեկավար կուսամարմինների բաժնի և համապատասխան մարզկոմների, յերկրկոմների ու ազգային կոմկուսակցութունների կենտկոմների կողմից ներկայացված քաղկոմների կուսկադրերի բաժնի վարիչների թեկնածու թյունները:

ՀԱՄԿ(Բ)Կ ԿՆՆՑԿՈՄ

27-Ա Մարտի 1935 Բ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՅՈՒՆ

	Եջ
Զգոնության և անպատասխանատվության մասին	3
Հոգատար կերպով աճեցնել կուսակցական կադրերը	14
Վճռահանորեն բարելավել կուսակցական աշխատանքը	24
Խորն ուսումնասիրել կուսակցության պատմությունը	35
Ընդդեմ համակրողների մեջ կատարվող աշխատանքի թեւազնահատման	46
Բուլճերիկյան թափ՝ կուսակցական աշխատանքին Կուսակցական-կազմակերպական և քաղաքական-դաստիարակչական խնդիրներէ մասին	68
Համկ(բ)Կ-ի քաղկոմներում կուսակցական կադրերի բաժիններ ստեղծելու մասին (Համկ(բ)Կ Կենտկոմի վորոշումը)	123



« Ազգային գրադարան



NL0186658

347

Գ Ի Ն Ը 70 Կ.

ЦЕНА 70 К.



**БОЛЬШЕВИСТСКОЙ РЕШИМОСТЬЮ  
УЛУЧШИТЬ ПАРТИЙНУЮ РАБОТУ**

**Партиздат, Эривань, 1935**